



ՇՈՒԿԱՅԻ  
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ  
2026

Սույն շուկայի հետազոտությունը մշակվել է «Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման  
Կենտրոնի մասնագետների կողմից



ՀՀ, 0002, Երևան, Եկմայան փողոց 6



+374 10 574778 | +374 77 574778 | +374 95 574778 | +374 99 574778



[www.bsc.am](http://www.bsc.am)



[bsc@bsc.am](mailto:bsc@bsc.am)



<https://www.facebook.com/BSCBusinessSupportCenter>



<https://www.linkedin.com/company/bsc-business-support-center/>

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

<b>ՀՀ</b>	Հայաստանի Հանրապետություն
<b>HoReCa</b>	Hotels, Restaurants, Cafes (Հյուրանոցներ, ռեստորաններ, սրճարաններ)
<b>ROI</b>	Return on Investment (Ներդրումների հետզևում/եկամտաբերություն)
<b>Quick Cash</b>	Օպերատիվ կանխիկի հոսք
<b>pH</b>	Ջրածնային ցուցիչ (հողի թթվայնության չափման միավոր)
<b>Ճ.Մ.Բ.</b>	Ճովի մակերևութից բարձրություն
<b>N, P, K</b>	Ազոտ, Ֆոսֆոր, Կալիում (հիմնական սննդատարրեր)
<b>IPM</b>	Integrated Pest Management (Վնասատուների դեմ պայքարի ինտեգրված համակարգ)

## ԱՂՅՈՒՄԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

- 
- Աղյուսակ 1. Լեռնավան և Մեծ Մանթաշ գյուղերի ագրո-էկոլոգիական համեմատական վերլուծություն
- Աղյուսակ 2. Ագրոանտառային համակարգի ազդեցությունը հողի բերրիության վրա
- Աղյուսակ 3. Լեռնավանի հատապտղային մշակաբույսերի տնտեսական ամփոփագիր
- Աղյուսակ 4. Հատապտուղների վաճառքի միջին գները խոշոր առևտրային ցանցերում
- Աղյուսակ 5. Բարձրարժեք և արդյունաբերական մշակաբույսերի տնտեսական ամփոփագիր
- Աղյուսակ 6. Բարձրարժեք մշակաբույսերի մանրածախ գները առցանց հարթակներում
- Աղյուսակ 7. Նիշային և անտառային տեսակների ֆունկցիոնալ նշանակությունը
- Աղյուսակ 8. Ծնեբեկի մշակության տնտեսական ցուցանիշները (Մեծ Մանթաշ)
- Աղյուսակ 9. Բանջարաբոստանային մշակաբույսերի տնտեսական ամփոփագիր
- Աղյուսակ 10. Բանջարաբոստանային մշակաբույսերի մանրածախ գները (1 կգ)
- Աղյուսակ 11. Նիշային և պաշտպանիչ տեսակների ֆունկցիոնալ բնութագիրը
- Աղյուսակ 12. Կերային մշակաբույսի տնտեսական ամփոփագիր.
- Աղյուսակ 13. SWOT վերլուծություն
- Աղյուսակ 14. SWOT վերլուծության հիմնման վրա մշակված ռազմավարություն
- Աղյուսակ 15. Թիրախային սուբերմարկետների և մթերային ցանցերի իրացման բաշխացուցակ
- Աղյուսակ 16. HoReCa ոլորտի թիրախային գործընկերներ և պրեմիում դասի ռեստորաններ
- Աղյուսակ 17. Արտադրող և վերամշակող ընկերությունների (պոտենցիալ մեծածախ գնորդների) ցանկ
- Աղյուսակ 18. Ագրոբիզնեսի աջակցող կառույցների և մասնագիտացված ՀԿ-ների ցանկ

- Աղյուսակ 19. Մասնագիտացված շուկաներ, Էկո-խանութներ և բնական հումքի իրացման կետեր
- Աղյուսակ 20. Արտադրական ցիկլի և ռազմավարական դիրքավորման աղյուսակ

## ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑԱՆԿ

- Պատկեր 1. Ընտրված հատապտղային մշակաբույսերը (սև հաղարջ, կարմիր հաղարջ, անփուշ մոշ)
- Պատկեր 2. Բարձրարժեք մշակաբույսեր (ծնեբեկ և լավանդա)
- Պատկեր 3. Նիշային և անտառային ընտրված բուսատեսակները
- Պատկեր 4. Բարձրարժեք բազմամյա մշակաբույս՝ ճնեբեկ
- Պատկեր 5. Միամյա և նիշային ընտրված մշակաբույսերը

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>1. ԱՄՓՈՓ ՆԱԽԱԲԱՆ.....</b>	<b>4</b>
<b>2. ՏԱՐԱՃԱՇՐՋԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ....</b>	<b>5</b>
<b>3. ԱԳՐՈԱՆՏԱՌԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ.....</b>	<b>9</b>
<b>4. ԲՈՒՅՍԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ.....</b>	<b>12</b>
<b>5. SWOT Վերլուծություն.....</b>	<b>27</b>
<b>6. ՇՈՒԿԱՅԻ ՊԱՅԱՆՁԱՐԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ՔԱՐՏԵԶ.....</b>	<b>29</b>
<b>7. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....</b>	<b>36</b>

## 1. ԱՄՓՈՓ ՆԱԽԱԲԱՆ

Սույն շուկայի ուսումնասիրությունը իրականացվել է FORACCA ծրագրի շրջանակներում՝ «ՇԵՆ» բարեգործական հասարակական կազմակերպության և «Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոնի համագործակցությամբ՝ նպատակ ունենալով գնահատել Լեռնավան (Լոռու մարզ) և Մեծ Մանթաշ (Ճիրակի մարզ) համայնքներում ագրոանտառային համակարգերի զարգացման տնտեսական և շուկայական ներուժը:

Ուսումնասիրության ընթացքում կիրառվել է համակցված մոտեցում, որը ներառում է ինչպես դաշտային, այնպես էլ վերլուծական աշխատանքներ: Մասնավորապես՝

- կազմակերպվել են հանդիպումներ համայնքների ակտիվ խմբերի հետ՝ «ՇԵՆ» ԲՀԿ-ի ներգրավմամբ՝ հասկանալու առկա արտադրական փորձը, սահմանափակումները և զարգացման ակնկալիքները,
- իրականացվել են հարցազրույցներ՝ ուղղված արտադրանքի իրացման, համագործակցության, տեխնիկական կարողությունների և շուկայի հասանելիության գնահատմանը,
- վերլուծվել են Մեծ Մանթաշ և Լեռնավան գյուղերի ագրոկլիմայական և հողային պայմանները՝ բարձրաժեռ մշակաբույսերի ընտրության նպատակով,
- ուսումնասիրվել է Հայաստանի շուկան՝ բացահայտելու պահանջարկը, գնորդների սեգմենտները և իրացման հնարավոր ուղիները:

Հետազոտության արդյունքում իրականացվել է բուսատեսակների նախնական ընտրություն և դրանց տնտեսական ու շուկայական գնահատում՝ հաշվի առնելով ինչպես տեղական պայմանները, այնպես էլ շուկայի պահանջարկը:

Ուսումնասիրությունը կենտրոնանում է ոչ միայն արտադրական հնարավորությունների, այլ նաև շուկայի հասանելիության և առևտրայնացման վրա՝ առաջարկելով գործնական լուծումներ համայնքների համար:

Վերջնական հաշվետվությունը ներառում է՝

- ընտրված բուսատեսակների տնտեսական և շուկայական գնահատում
- շուկայի պահանջարկի և պոտենցիալ գնորդների վերլուծություն
- արտադրանքի դիրքավորման և առաջխաղացման առաջարկություններ
- շուկայի հասանելիության և համագործակցության հնարավոր ուղղություններ

## 2. ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ագրոանտառային համակարգերի հաջող ներդրման և շուկայական մրցունակության նախապայմանը տեղանքի բնակլիմայական և հողային ռեսուրսների ճշգրիտ գնահատումն է: Ուստի, այս բաժինը վերլուծում է այն բնական գործոնները, որոնք անմիջական ազդեցություն ունեն բույսերի բերքատվության և տնտեսական արդյունավետության վրա:

### 2.1 Աշխարհագրական և կլիմայական պայմաններ

#### ՄԵՑ ՄԱՆԹԱՇ

Մեծ Մանթաշը տեղակայված է Ճիրակի մարզի Արագած լեռան հյուսիսային լանջերին՝ ծովի մակերևույթից միջինում 1850-1950մ բարձրության վրա, ինչն այն դասում է Հայաստանի ամենաբարձրադիր բնակավայրերի շարքին:



Տարածաշրջանին բնորոշ է խիստ լեռնային կլիման, որտեղ տարեկան միջին ջերմաստիճանը տատանվում է 4.5°C-ից 5°C սահմաններում, իսկ տարեկան տեղումների քանակը կազմում է շուրջ 600-650 մմ: Այս բարձրության վրա վեգետացիոն շրջանը բավականին սեղմ է՝ տևելով մոտ 120 օր, ինչը պահանջում է մշակաբույսերի արագ աճի և հասունացման փուլերի ճշգրիտ հաշվարկ: Գյուղի համար լուրջ մարտահրավեր են ուժեղ լեռնային քամիները և գարնանային ուշացած ցրտահարությունները, որոնք կարող են վնասել նորատունկ տնկարկները:

## Լեռնավան



Լեռնավանը գտնվում է Լոռու մարզի Փամբակի լեռնաշղթայի ստորոտին՝ ծովի մակերևույթից մոտ 1725մ բարձրության վրա, ինչը ստեղծում է Մեծ Մանթաշի համեմատ փոքր-ինչ ավելի մեղմ, բայց դեռևս բարձրլեռնային կլիմայական պայմաններ:

Տարեկան միջին ջերմաստիճանն այստեղ կազմում է 5.5°C-ից 6°C, սակայն բնակավայրն աչքի է ընկնում տեղումների զգալի առատությամբ՝ տարեկան հասնելով մինչև 800 մմ-ի, ինչը նպաստում է խոնավ միկրոկլիմայի ձևավորմանը և նվազեցնում ոռոգման պահանջը: Աճեցման սեզոնը Լեռնավանում տևում է մոտ 130-140 օր՝ ապահովելով համեմատաբար ավելի երկար ժամանակահատված բույսերի զարգացման համար: Բարձր խոնավությունը բնական մրցակցային առավելություն է հատապտղային մշակաբույսերի (հաղարջ, անփուշ մոշ) համար, քանի որ նվազեցնում է ոռոգման ենթակառուցվածքների նկատմամբ կախվածությունը: Սակայն լեռնային ռելիեֆի պատճառով: Գյուղը խոցելի է ձմեռային խիստ սառնամանիքների և հովտային հատվածներում սառը օդային զանգվածների կուտակման նկատմամբ:

## ՄԵՃ ՄԱՆԹԱՇ

Մեծ Մանթաշի հողային ֆոնդի հիմնական հատվածը լեռնային սևահողերն են, որոնք աչքի են ընկնում հումուսի բարձր պարունակությամբ (8-10%) և հատիկավոր կառուցվածքով: Հումուսի բարձր մակարդակը ապահովում է սննդատարրերի կայուն պաշար, սակայն բաց դաշտային դիրքը քամիների ազդեցությամբ կարող է հանգեցնել հողի մակերեսային չորացման և ածխածնի

(C) արագ կորստի: Ագրոանտառային վերին շերտի ստվերը պահպանում է այս օրգանական նյութերը՝ բարձրացնելով հողի արտադրողականությունը մինչև 20-40%: Բացի դա հողի pH մակարդակը տատանվում է 6.8-ից 7.2 սահմաններում, ինչը ստեղծում է չեզոք միջավայր՝ նպաստավոր սննդատարրերի յուրացման և բազմազան մշակաբույսերի աճի համար: Տարածքի բնական ջրահեռացումը բավարար է, սակայն բաց դաշտային դիրքը պահանջում է խոնավության պահպանման լրացուցիչ ագրոտեխնիկական միջոցառումներ:

## ԼԵՌՆԱՎԱՆ

Լեռնավանի հողային ծածկույթը բնութագրվում է լեռնային սևահողերի և մարգագետնային սևահողանման հողերի համադրությամբ, որոնք ունեն թույլ թթվայինից մինչև չեզոք pH (6.5-7.0): Ռելիեֆի թեքությունը նպաստում է ինտենսիվ ջրահեռացմանը, ինչը բարձրացնում է սննդատարրերի (Ca, K, Mg) լվացման ռիսկը առատ տեղումների պատճառով: Ագրոանտառային համակարգում ծառերի խորը արմատները կատարում են «հանքային պոմպի» դեր՝ ստորին շերտերից վեր բարձրացնելով այս տարրերը դեպի մակերեսային շերտեր: Բարձր բերրիությունն ու խոնավության բնական պաշարները ստեղծում են օպտիմալ միջավայր հատապտղատուների և անտառային տեսակների արմատավորման համար:

## 2.2 Տարածաշրջանի գործող գյուղատնտեսական գործունեություն

### ՄԵՏ ՄԱՆԹԱՇ

Գյուղատնտեսությունը հիմնված է ինտենսիվ դաշտավարության վրա, որտեղ առաջնային նշանակություն ունեն հացահատիկային կուլտուրաները, կարտոֆիլը և կերային բազան ապահովող բազմամյա խոտաբույսերը: Տարածքը բարենպաստ է միամյա (ճակնդեղ, ոլոռ) և բազմամյա (ծնեբեկ) մշակաբույսերի կիրառման համար:

### ԼԵՌՆԱՎԱՆ

Լեռնավանում գյուղատնտեսական գործունեության հիմքը խոշոր և մանր եղջերավոր անասնապահությունն է՝ շնորհիվ ընդարձակ բնական արոտավայրերի և խոտհարքների: Սա կարևոր նախադրյալ է մշակովի հատապտղուների և նիշային անտառային տեսակների շուկայականացման համար: Հողագործությունը կրում է առավելապես տնամերձ և օժանդակ բնույթ՝ կենտրոնանալով կարտոֆիլի և սեզոնային բանջարեղենի մշակության վրա: Անտառամերձ գոտու ամկայությունը սահմանում է նաև վայրի բուսատեսակների հավաքչության ավանդույթը, ինչը կարևոր նախադրյալ է մշակովի ագրոանտառային համակարգերի անցման համար:

**Ստորև ներկայացված է գյուղերի համեմատական բնութագիրը:**

### Աղյուսակ 1. Լեռնավան և Մեծ Մանթաշ գյուղերի ագրո-էկոլոգիական համեմատական վերլուծություն

Ցուցիչ	Մեծ Մանթաշ (Շիրակ)	Լեռնավան (Լոռի)
Բարձրություն	1850 - 1950 մ	~1725 մ

Ցուցիչ	Մեծ Մանթաշ (Շիրակ)	Լեռնավան (Լոռի)
Կլիմա	Խիստ լեռնային, չորային քամիներ	Բարձրլեռնային, խոնավ
Տեղումներ	600 - 650 մմ	~800 մմ
Վեգետացիա	120 օր (Սեղմ)	130 - 140 օր (Միջին)
Հողի տեսակ	Լեռնային սևահող (Հումուս՝ 8-10%)	Մարգագետնային սևահողանման
pH մակարդակ	6.8 - 7.2 (Չեզոք)	6.5 - 7.0 (Թույլ թթվային)

Վերլուծելով տարածաշրջանի բնակլիմայական և հողային պայմանները՝ պարզ է դառնում, որ թե՛ Լեռնավանը, թե՛ Մեծ Մանթաշը օժտված են բարձր պտղաբերությամբ օրգանական հողերով, սակայն ունեն տարբերվող միկրոկլիմայական մարտահրավերներ: Եթե Մեծ Մանթաշի համար առաջնային խնդիրը ուժեղ քամիներն ու կարճ վեգետացիոն շրջանն են, ապա Լեռնավանում առանցքային է խոնավության ճիշտ կառավարումը և սննդատարրերի լվացման կանխումը: Երկու գյուղերում էլ ագրոանտառային համակարգի ներդրումը հանդիսանում է ոչ միայն տնտեսական, այլև Էկոլոգիական անհրաժեշտություն՝ ստեղծելով պաշտպանիչ միջավայր բարձրարժեք մշակաբույսերի համար:

### 3. ԱԳՐՈՒՆՏԱՌԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ագրոանտառային համակարգը Լեռնավանում և Մեծ Մանթաշում դիտարկվում է որպես բարդ կենսաբանական մեխանիզմ, որտեղ բույսերի տարբեր շերտերն ապահովում են հողի բերրիության բնական վերականգնումը: Համակարգը կառուցված է երեք հիմնական շերտերից, որոնք գործում են փոխլրացնող սկզբունքով.

- **Վերին շերտ (Անտառային ծառեր).** Այս շերտը հանդիսանում է Էկոհամակարգի հենասյունը: Այն ոչ միայն ֆիզիկապես պաշտպանում է ստորին մշակաբույսերը արևից ու քամուց, այլև իրականացնում է «հանքային պոմպի» դեր՝ ստորին շերտերից վեր բարձրացնելով կենսական տարրերը (Ca, K):
- **Միջին շերտ (Թփեր և հատապտղատուներ).** Ապահովում է կլիմայական պաշտպանություն և հողի միկրոֆլորայի հարստացում: Թփերը ստեղծում են սիմբիոտիկ կապեր հողի սնկերի (միկորիզա) հետ՝ հասանելի դարձնելով ֆոսֆորը (P) մյուս բույսերի համար:
- **Ստորին շերտ (Միամյա և բազմամյա բույսեր).** Կանխում է հողի հյուժումը և Էրոզիան: Այս շերտը ծածկում է հողի բաց մակերեսը և լրացուցիչ ազոտ (N) ֆիքսում ներարկում հողի մեջ (հատիկաընդդեմների միջոցով):

Ստորն ներկայացված աղյուսակը ամփոփում է այս գործընթացների չափելի ազդեցությունը հողի արտադրողականության վրա:

#### Աղյուսակ 2. Ագրոանտառային համակարգի ազդեցությունը հողի բերրիության վրա.

Խնդիր	Ագրոանտառային լուծում	Չափելի արդյունք
Էրոզիա և լվացում	Արմատային «պոմպի» համակարգ	Տարրերի կորստի նվազում 30-50%-ով
Գերտաքացում	Վերին շերտի ստվերային ծածկ	Խոնավության պահպանման աճ 10-20%-ով
Սննդատարրերի սպառում	Բազմաշերտ արմատային համակարգ	Արդյունավետության աճ 25-30%-ով
Ազոտի դեֆիցիտ	Բնական ազոտաֆիքսացիա	+50-100 կգ/հա կենսաբանական ազոտ
Քամու ազդեցություն	Կենդանի հողմապաշտպան պատնեշ	Քամու արագության նվազում 20-40%-ով

Աղյուսակը ցույց է տալիս, որ ագրոանտառային համակարգը ոչ միայն Էկոլոգիական, այլև գործնական և չափելի ազդեցություն ունի հողի արտադրողականության վրա:

Ընդհանուր առմամբ, ներկայացված տվյալները վկայում են, որ Լեռնազանգուստի և Մեծ Մանթաշ գյուղերում կիրառվող ագրոանտառային մոտեցումը կարող է դիտարկվել որպես հողի կայուն կառավարման արդյունավետ մոդել, որը համատեղում է բնապահպանական պաշտպանությունն ու գյուղատնտեսական արդյունավետությունը:

Ձեկույցում բույսերի ընտրությունը կատարվել է՝ հիմնվելով դրանց շուկայական պահանջարկի, բարձրարժեք գոտում «ուշ սեզոնի» առավելության և տնտեսական բարձր արդյունավետության վրա:

## 1. Լեռնազանգուստի համայնք (Լոռու մարզ)

Ստորև ներկայացված է հետազոտվածների և տնկման համար վերջնական ընտրվածների համեմատությունը.

Կատեգորիա	Ջեռագոտված բուսատեսակներ	Ընտրված բուսատեսակներ
Անտառային տեսակներ	Գիհի ( <i>Juniperus</i> ), Կեչի ( <i>Betula</i> ), Բոխի ( <i>Carpinus</i> ), Յալգենի ( <i>Fraxinus</i> ), Կաղնի ( <i>Quercus</i> )	Կեչի ( <i>Betula</i> ), Կաղնի ( <i>Quercus</i> ), Գիհի ( <i>Juniperus</i> )
Բարձրարժեք և Նիշային	Լավանդա ( <i>Lavandula</i> ), Ծնեբեկ ( <i>Asparagus</i> ), Սամշիտ ( <i>Buxus</i> )	Ծնեբեկ ( <i>Asparagus</i> ), Լավանդա ( <i>Lavandula</i> )
Չատապտուղներ	անփուլ մոշ ( <i>Rubus fruticosus</i> ), Կարմիր հաղարջ ( <i>Ribes rubrum</i> ), Սև հաղարջ ( <i>Ribes nigrum</i> )	Սև հաղարջ ( <i>Ribes nigrum</i> ), Կարմիր հաղարջ ( <i>Ribes rubrum</i> ), անփուլ մոշ ( <i>Rubus</i> ), Մասուր ( <i>Rosa canina</i> )
Պտղատուներ	Սալորենի ( <i>Prunus domestica</i> ), Ծլոր ( <i>Prunus cerasifera</i> ), Մամխենի ( <i>Prunus spinosa</i> ), Բալ ( <i>Prunus cerasus</i> ), Վայրի խնձորենի/տանձենի ( <i>Malus sylvestris/Pyrus pyraster</i> )	Ձեկույցում չեշտը դրված է հատապտուղների վրա:
Արագած տեսակներ	Բարդու հիբրիդներ	Ձեկույցում չեն նշվում որպես հիմնական:

## 2. ՄԵԾ ՄԱՆԹԱՇ

Մեծ Մանթաշի համար ընտրվել են այն տեսակները, որոնք առավել դիմացկուն են լեռնային խիստ քամիներին և ապահովում են արագ եկամուտ:

Կատեգորիա	Ջեռագոտված բուսատեսակներ	Շնորված բուսատեսակներ
Անտառային/ Պաշտպանիչ	Կեչի ( <i>Betula</i> ), Վայրի խնձորենի ( <i>Malus sylvestris</i> ), Կարգանա ( <i>Caragana</i> ), Գիհի ( <i>Juniperus</i> ), անփուռ մոշ ( <i>Rubus</i> ), Ալոճենի ( <i>Crataegus</i> )	Կարգանա (Դեղին ակացիա) ( <i>Caragana arborescens</i> ), Կեչի ( <i>Betula</i> )
Բարձրարժեք և Վայրի	Ծնեբեկ ( <i>Asparagus</i> ), Մանդակ ( <i>Astrodaucus</i> ), Վայրի վարդ ( <i>Rosa</i> )	Ծնեբեկ ( <i>Asparagus</i> )
Միամյա և Կերային	ճակնդեղ ( <i>Beta vulgaris</i> ), Ոլոռ ( <i>Pisum sativum</i> ), Կորնգան ( <i>Onobrychis</i> )	Կորնգան ( <i>Onobrychis</i> ), Կարմիր սեղանի ճակնդեղ ( <i>Beta vulgaris</i> ), Ոլոռ ( <i>Pisum sativum</i> )

### Ինչու՞ են ընտրվել հենց այս տեսակները.

- **Ծնեբեկ (*Asparagus*) և Լավանդա (*Lavandula*):** Ունեն բարձր շահութաբերություն և ուղղված են պրեմիում HoReCa սեգմենտին:
- **Ջատապտուղներ (Ջաղարջ (*Ribes*), անփուռ մոշ (*Rubus*)):** Լեռնավանի բարձր խոնավությունը թույլ է տալիս ստանալ բարձրորակ բերք՝ նվազագույն ոռոգման ծախսերով:
- **Կորնգան (*Onobrychis*) և Միամյա մշակաբույսեր:** Մեծ Մանթաշում ապահովում են «արագ կանխիկ» (Quick Cash) հոսք և անասնակերի բազա:
- **Պաշտպանիչ շերտեր (Կեչի (*Betula*), Կարգանա (*Caragana*)):** Ճառայում են որպես բնական վահան՝ պաշտպանելով մշակաբույսերը քամուց և էրոզիայից :

## 4. ԲՈՒՅՍԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Լեռնավան և Մեծ Մանթաշ գյուղերի համար մշակված ագրոանտառային մոդելի կենսունակությունը հենվում է բույսերի այնպիսի համակարգի վրա, որտեղ ինտեգրված յուրաքանչյուր տեսակ ծառայում է թե՛ որպես հողի կառուցվածքի ու բերրիության վերականգնման գործոն, և թե՛ որպես շուկայական պահանջարկով հիմնավորված եկամտի դիվերսիֆիկացված աղբյուր:

Այս բազմաշերտ մոտեցումը թույլ է տալիս առավելագույնի հասցնել արտադրողականությունը՝ միաժամանակ ձևավորելով տնտեսական դիմակայունություն և կլիմայական մարտահրավերների նկատմամբ:

### 4.1 Լեռնավանի բույսերի տեսակների ընտրություն

Լեռնավանի համար բուսատեսակների ընտրությունը կատարվել է ռազմավարական տարբերակման սկզբունքով՝ համադրելով միջազգային հեղինակավոր կառույցների (FAO, OECD, ITC) տվյալները Հայաստանի ներքին շուկայի փաստացի գնային իրողությունների հետ:

#### Հատապտղային մշակաբույսեր



Ribes nigrum  
(Սև հաղարջ/Black Currant)



Ribes rubrum  
(Կարմիր հաղարջ/Red Currant)



Rubus fruticosus  
(Մոշ/Blackberry)

**Պատկեր 1. Ընտրված հատապտղային մշակաբույսերը՝ սև հաղարջ, կարմիր հաղարջ, անփուշ մոշ:**

Լեռնավանի համար հատապտուղ մշակաբույսերը հանդիսանում են արտադրական համակարգի առանցքային բաղադրիչը, քանի որ դրանք ապահովում են համեմատաբար արագ եկամտի ձևավորում և ունեն կայուն շուկայական պահանջարկ: Ընտրված են հետևյալ տեսակները

**Մշակաբույսերի ընտրությունը պայմանավորված է մի քանի գործոններով:**

- **Ագրոկլիմայական համապատասխանություն**  
 Հատապտուղները օպտիմալ կերպով հարմարվում են Լեռնավանի խոնավ և զով կլիմային՝ նվազեցնելով բնական ռիսկերը:
- **Շուկայական դիվերսիֆիկացիա**  
 Առկա է բազմաշերտ պահանջարկ՝ թարմ սպառման, սառեցման և արդյունաբերական վերամշակման ոլորտներում:
- **Ֆինանսական դինամիկա**  
 Արդեն 2-3-րդ տարում բերքատվության փուլ մտնելը թույլ է տալիս ապահովել կապիտալի արագ հետգնում (ROI) և կայուն կանխիկ հոսքեր (Cash-flow):

Նշված գործոնների համադրությունը ձևավորում է հետևյալ տնտեսական պատկերը, որտեղ արտացոլված են մեկ հեկտարի հաշվարկով ակնկալվող ֆինանսական ցուցանիշները.

**Աղյուսակ 3. Հատապտղային մշակաբույսերի տնտեսական ամփոփագիր**

Ցուցիչ	Սև հաղարջ ( <i>Ribes nigrum</i> )	Կարմիր հաղարջ ( <i>Ribes rubrum</i> )	անփուշ մոշ ( <i>Rubus</i> )
Բերքատվություն (տ/հա)	5 - 8	4 - 7	6 - 10
Գին (դրամ/կգ)	1,390	2,000	1,500
Եկամուտ (մլն դրամ/հա)	6.95 - 11.12	8 - 14	9 - 15
Բերքատվության սկիզբ	2 - 3 տարի	2 - 3 տարի	2 տարի

Սև հաղարջի (*Ribes nigrum*) և անփուշ մոշի (*Rubus*) բարձր եկամտաբերությունը հնարավորություն է տալիս ձևավորել կայուն կանխիկ հոսքեր (cash flow)՝ ֆինանսավորելով համակարգի առավել երկարաժամկետ ներդրումային բաղադրիչների զարգացումն ու ընդլայնումը:

ՀՀ սպառողական շուկայում հատապտուղների գնագոյացումը կրում է արտահայտված սեզոնային բնույթ: Ստորև ներկայացված գները հաշվարկվել են 2026 թվականի աշնանային ժամանակահատվածի համար՝ հիմք ընդունելով Երևանի Մեյմանդար շուկայում իրականացված շուկայական հարցման արդյունքները, ինչպես նաև բարձր գնային սեգմենտում գործող առաջատար մանրածախ առևտրային ցանցերի (SAS Supermarket, Yerevan City, Parma և այլք)

միջին վաճառքային գները: Ներկայացված արժեքները արտացոլում են շուկայում արձանագրված միջին մեծածախ գների մակարդակը տվյալ սեզոնի ընթացքում:

**Աղյուսակ 4. Հատապտուղների վաճառքի միջին գները խոշոր առևտրային ցանցերում (ՀՀ դրամ/կգ)**

Վաճառքի կետ	Սև հաղարջ ( <i>Ribes nigrum</i> ) (1 կգ)	Կարմիր հաղարջ ( <i>Ribes rubrum</i> ) (1 կգ)	անփուշ մոշ ( <i>Rubus</i> ) (1 կգ)
Երևան Սիթի	1,300 - 1,500 □	1,100 - 1,400 □	3,500 - 4,500 □
Պարմա	1,500 - 1,700 □	1,300 - 1,600 □	4,000 - 5,500 □
ՍԱՍ	1,700 - 2,000 □	1,600 - 2,000 □	5,000 - 7,000 □
Նոր Չովք	1,200 - 1,400 □	1,000 - 1,300 □	3,000 - 4,000 □

Շուկայում նկատվում է գների զգալի տարբերակում՝ կախված առևտրային ցանցի թիրախային սպառողական խմբից: «Նոր Չովք» և «Երևան Սիթի» ցանցերն ապահովում են առավել մատչելի՝ մասսայական սպառման գներ, մինչդեռ «ՍԱՍ» և «Պարմա» ցանցերը մասնագիտացած են ավելի արժեքավոր տեսականու իրացման մեջ:

Ըստ շուկայական գնագոյացման տվյալների՝ սև հաղարջի դեֆիցիտը և տարածաշրջանի բարձրադիր գոտու որակական առավելությունները հիմք են ստեղծում պրեմիում իրացման համար: Եկամտի լայն միջակայքը փաստում է, որ մեծածախ վաճառքից անցումը դեպի HoReCa սեգմենտ կամ սառեցված արտահանում կտրուկ բարձրացնում է շահութաբերությունը, մինչդեռ կարմիր հաղարջի դիմացկունությունը ծառայում է որպես ապահովագրություն կլիմայական ռիսկերի դեպքում:

**Բարձրարժեք և արդյունաբերական մշակաբույսեր**

Լեռնավանի համար ծնեբեկը և լավանդան հանդիսանում են արտադրական համակարգի հիմնասյունային բաղադրիչները, քանի որ դրանք ուղղված են բարձր մարժայականության ապահովմանը և ունեն արտահանման ու ներմուծման փոխարինման մեծ ներուժ: Ընտրված են *Asparagus officinalis* և *Lavandula angustifolia* տեսակները:



'Asparagus officinalis'  
 (Ճնեբեկ/Asparagus)



'Lavandula angustifolia'  
 (Լավանդա/Lavender)

**Պատկեր 2. Ընտրված բարձրարժեք մշակաբույսերը**

**Մշակաբույսերի ընտրությունը պայմանավորված է մի քանի գործոններով.**

- **Շուկայական դիրքավորում.** Ճնեբեկը ուղղված է պրեմիում HoReCa սեգմենտին՝ տեղական շուկայում նվազեցնելով բարձրարժեք ներմուծված արտադրանքի կախվածությունը և առաջարկելով թարմ ու մրցունակ այլընտրանք: Միաժամանակ, լավանդայի նկատմամբ պահանջարկը ԵՄ շուկայում կայուն աճ է գրանցում, ինչը ձևավորում է արտահանման և երկարաժամկետ շուկայական զարգացման բարձր ներուժ:
- **Արտադրական կայունություն.** Լավանդան ունի նվազագույն պահանջներ ջրի նկատմամբ և կանխում է երոզիան, իսկ Ճնեբեկն ունի երկար արտադրական կյանք (մինչև 15 տարի):
- **Տնտեսական մասշտաբ.** Լիարժեք բերքատվության փուլում այս մշակաբույսերն ապահովում են ռեկորդային բարձր հասույթ մեկ հեկտարի հաշվարկով:

Նշված գործոնների համադրությունը ձևավորում է հետևյալ տնտեսական պատկերը:

**Աղյուսակ 5. Բարձրարժեք և արդյունաբերական մշակաբույսերի տնտեսական ամփոփագիր**

Ցուցիչ	Ճնեբեկ	Լավանդա (Չոր)	Լավանդա (Ցուղ)
Բերքատվություն	4 - 8 տ/հա	1.5 - 3 տ/հա	20 - 40 կգ/հա

Ցուցիչ	Ճնեքեկ	Լավանդա (Չոր)	Լավանդա (Յուղ)
Միջին գին (դրամ/կգ(յուղի դեպքում է))	3,000	7,000 - 12,000	20,000 - 35,000
Եկամուտ (մլն դրամ/հա)	12 - 24	10.5 - 36.0	1.1 - 2.2
Արտադրական կյանք	10 - 15 տարի	10+ տարի	10+ տարի

Հիմնվելով Ադյուսակ 5-ի տվյալների վրա՝ ծնեքեկի և լավանդայի ընտրությունը հիմնավորվում է դրանց բացառիկ արտադրական կյանքով (10-15 տարի), ինչը թույլ է տալիս կապիտալ ներդրումները բաշխել երկար ժամանակահատվածի վրա և նվազեցնել տարեկան ֆինանսական բեռը: Ստորև բերված ադյուսակում ամփոփված են ծնեքեկի և լավանդայի մանրածախ գները՝ ըստ առցանց հարթակների և առևտրային ցանցերի տվյալների:

**Ադյուսակ 6. Բարձրարժեք մշակաբույսերի մանրածախ գները առցանց հարթակներում**


Վաճառքի կետ	Ճնեքեկ (1 կգ)	Լավանդա
FruitParty.am	9,200 □	Լավանդայի յուղ / Չոր հումք*
Mrger.am	4,200 □ (420□ / 100գ)	Էկո-փնջեր / Թեյեր
Պրեմիում ցանցեր (SAS/Parma)	7,500 - 11,500 □	Դեկորատիվ փնջեր

Ադյուսակ 6-ում ներկայացված տվյալների համադրումը թույլ է տալիս կատարել հետևյալ ռազմավարական եզրահանգումները.

- **Գնային տարբերակում և թիրախային սեգմենտներ.** Շուկայում առկա է պահանջարկի հստակ տարբերակում՝ կախված իրացման վերջնակետից: Ծնեքեկի պարագայում գների բարձր շեմը (մինչև 11,500 □) վկայում է դրա բացառիկության մասին: Սա Լեռնավանի արտադրանքի համար ստեղծում է հնարավորություն՝ մուտք գործելու HoReCa սեգմենտ՝ առաջարկելով ավելի թարմ և գնային առումով մրցունակ տեղական այլընտրանք:
- **Ավելացված արժեքի ձևավորում.** Եկամտի լայն միջակայքը փաստում է, որ մեծածախ իրացումից անցումը դեպի վերամշակված արտադրանք (լավանդայի յուղ, թեյեր) կամ ուղիղ մատակարարում մասնագիտացված սպառողներին կտրուկ բարձրացնում է շահութաբերությունը:

## Նիշային և անտառային տեսակներ

Համակարգի ամբողջականությունն ու Էկոհամակարգային ծառայություններն ապահովելու համար ներառվել են նիշային մշակաբույսեր՝ **մասրենի փշոտ, ծառակային սորբուս, և անտառային տեսակներ՝ բերոզյա, կաղնի և գիհի:**



### Պատկեր 3. Նիշային ընտրված բուսատեսակները

#### Այս տեսակների ընտրությունը պայմանավորված է մի քանի գործոններով.

- **Էկոհամակարգային կայունություն.** Անտառային տեսակները պաշտպանում են մշակաբույսերը քամուց, նվազեցնում են Էրոզիան և բարելավում հողի հումուսը:
- **Բարձրարժեք վերամշակում.** Նիշային տեսակները՝ մասրենի փշոտ, ծառակային սորբուս, և անտառային տեսակներ՝ բերոզյա, կաղնի և գիհի մեծ պահանջարկ ունեն դեղագործության և պրեմիում վերամշակման (թեյեր, օշարակներ) ոլորտներում:
- **Ցածր գործառնական ծախսեր.** Լինելով տեղական տեսակներ՝ դրանք պահանջում են նվազագույն խնամք և ծառայում են որպես լրացուցիչ «ֆինանսական բարձիկ»:
- **Կենսաբազմազանության խթանում և բնական պաշտպանություն.** Տեսակների բազմազանությունը ստեղծում է բարենպաստ միջավայր օգտակար միջատների և թռչունների համար, ինչը հանդիսանում է ինտեգրված վնասատուների դեմ պայքարի (IPM) բնական մեթոդ՝ նվազեցնելով քիմիական միջամտության կարիքը հարակից այգիներում:
- **Կլիմայական ադապտացիա և դիմացկունություն.** Լինելով տեղական (աբորիգեն) տեսակներ՝ դրանք լավագույնս հարմարված են Լեռնավանի բնակլիմայական պայմաններին,

ունեն բարձր ցրտադիմացկունություն և երաշտադիմացկունություն, ինչը երաշխավորում է կանաչ զանգվածի պահպանումը սույնիսկ էքստրեմալ եղանակային պայմաններում:

Ի տարբերություն հիմնական մշակաբույսերի, նիշային և անտառային տեսակների արժեքը ձևավորվում է ոչ միայն ուղղակի վաճառքից, այլև տնտեսության ընդհանուր արդյունավետության բարձրացումից: Ստորև ներկայացված է դրանց կիրառական նշանակությունը և տեղաբաշխման սկզբունքը:

### Աղյուսակ 7. Նիշային և անտառային տեսակների ֆունկցիոնալ նշանակությունը

Բուսատեսակ	Տեղաբաշխման գոտի	Կիրառման հիմնական ուղղություն	Փոխարինելիություն և Առավելություն
Մասուր	Այգիների եզրաշերտեր և թեքություններ	Պրեմիում վերամշակում, բնական ցանկապատ	Ապահովում է արագ եկամուտ (2-3 տարի)
Արոսենի	Միջշարքային տարածություններ	Օջարակների և թուրմերի հումք, գեղագիտական արժեք	Լրացնում է մեղրատու բազան
Կեչի	Հյուսիսային և քամոտ սահմաններ	Հողի որակի բարելավում, կեչու հյութի ստացում	Ամենաարագաճ տեսակն է քամու դեմ
Կաղնի	Տարածքի հիմնական պարագիծ	Երկարաժամկետ Էկո-կայունություն, պտուղ (կաղին)	Ծառայում է որպես տարածքի «կմախք»
Գիհի	Քարքարոտ և էրոզացված հողակտորներ	Եթերայուղեր, համեմունք, հողի ամրացում	Մշտադալար է՝ պաշտպանում է նաև ձմռանը

Հիմնվելով Աղյուսակ 7-ի վրա՝ այս բուսատեսակների ներառումը հիմնավորվում է դրանց տեղաբաշխման ճկունությամբ: Այն տարածքները, որոնք պիտանի չեն ծնեբեկի կամ լավանդայի ինտենսիվ մշակության համար (օրինակ՝ զառիթափ թեքություններ կամ քարքարոտ հատվածներ), յուրացվում են մասուրի և գիհու միջոցով՝ դառնալով եկամտաբեր ակտիվներ:

- **Ռեսուրսների փոխարինելիություն.**

Անտառային տեսակների տնկումը հնարավորություն է տալիս նվազեցնել արհեստական ցանցերի և քամուց պաշտպանող կառույցների ծախսերը: Օրինակ՝ կեչու և կաղնու շերտերը փոխարինում են թանկարժեք ինժեներական լուծումներին՝ միաժամանակ բարձրացնելով հողի բերրիությունը (հումուսի կուտակման հաշվին):

- **Երկարաժամկետ ակտիվների կառավարում.**

Ի տարբերություն մեկամյա մշակաբույսերի, այս խումբը պահանջում է միայն սկզբնական

Ներդրում: Տարիների ընթացքում դրանց ինքնարժեքը նվազում է՝ հասնելով զրոյի, մինչդեռ մատուցվող Էկոհամակարգային ծառայությունները և ստացվող հումքի արժեքը շարունակաբար աճում են:

Այսպիսով, Նիշային մշակաբույսերը ծառայում են որպես տնտեսության «ռեզերվային ֆոնդ»՝ ապահովելով եկամտաբերությունն այնտեղ, որտեղ ավանդական գյուղատնտեսությունը կլիներ անարդյունավետ:

## **Ռազմավարական համադրություն և ֆինանսական արդյունք**

Լեռնավանի համար ընտրված բույսերի համակցությունը ձևավորում է փուլային եկամտային համակարգ, որտեղ յուրաքանչյուր բաղադրիչ ունի իր հստակ տնտեսական դերը.

- **Հատապտուղներ**

Ապահովում են օպերատիվ կանխիկի հոսք (Quick Cash) արդեն 2-րդ տարում՝ ծածկելով ընթացիկ գործառնական ծախսերը:

- **Ճներեկ**

Հանդիսանում է համակարգի հիմնական շահութաբեր ակտիվը (High Margin)՝ թիրախավորելով արտահանման պոտենցիալը:

- **Լավանդա**

Ստեղծում է բարձրարժեք, վերամշակելի արտադրանքի պաշար (Added Value) և ապահովում էլք դեպի արտահանման շուկաներ:

- **Նիշային և անտառային տեսակներ՝**

Մասրենի փշոտ, ծառակային սորբուս, և անտառային տեսակներ՝ բերրոյա, կաղնի և գիհի: Ծառայում են որպես տնտեսության «անվտանգության բարձիկ» (Risk Mitigation)՝ համատեղելով լրացուցիչ եկամուտը և Էկոհամակարգային պաշտպանությունը:

Լիարժեք արտադրության փուլում համակարգի կենսունակությունը հիմնված է ոչ թե մեկ մշակաբույսի բերքատվության, այլ միջճյուղային սիներգիայի վրա: Թեև Նիշային և անտառային տեսակների ուղղակի ֆինանսական եկամուտը կարող է տատանվել, դրանց ներդրումը հիմնական մշակաբույսերի ինքնարժեքի նվազեցման (բնական պաշտպանություն, ռեսուրսների խնայողություն) և հողի բերրիության բարձրացման հարցում ապահովում է կայուն միջնաժամկետ շահութաբերություն:



**Պատկեր 4. Բարձրարժեք բազմամյա ընտրված բուսատեսակը՝ ճներեկը.**

## 4.2 Մեծ Մանթաշի բույսերի տեսակների ընտրություն

Մեծ Մանթաշի համար բուսատեսակների ընտրությունը կատարվել է արտադրական դիմացկունության և շուկայական օպտիմալացման սկզբունքով: Ընտրված պորտֆելը թիրախավորում է բարձրլեռնային սևահողերի կապիտալիզացիան և ուղղված է ինչպես արագ շրջանառու միջոցների ստեղծմանը, այնպես էլ կլիմայական ռիսկերի կառավարմանը:

Ճներեկի ընտրությունը պայմանավորված է շուկայական բարձր պահանջարկով, հողի կառուցվածքը բարելավող ագրոնոմիական ազդեցությամբ և բարձր տնտեսական եկամտաբերությամբ:

### Աղյուսակ 8. Ճներեկի մշակության տնտեսական ցուցանիշները (Մեծ Մանթաշ)

Ցուցիչ	Ճներեկ
Բերքատվություն	4 - 8 տ/հա
Միջին գին (դրամ/կգ (յուրի դեպքում լ))	3,000

Ցուցիչ	Ճնեբեկ
Եկամուտ (մլն դրամ/հա)	12 - 24
Արտադրական կյանք	10 - 15 տարի

Աղյուսակ 8-ի տվյալների համաձայն՝ ճնեբեկը Մեծ Մանթաշի տնտեսական մոդելում հանդես է գալիս որպես առանցքային եկամտաբեր միավոր: Դրա արտադրողականության բարձր ցուցանիշները երաշխավորում են տնտեսության ֆինանսական կայունությունը և տեղական հողային ռեսուրսների արդյունավետ կապիտալիզացումը: Շահութաբերության տվյալ մակարդակը Եականորեն գերազանցում է տարածաշրջանում ավանդական համարվող բանջարաբուծական մշակաբույսերի ցուցանիշներին:

Ռազմավարական տեսանկյունից ճնեբեկի ներդրումային գրավչությունը պայմանավորված է պրեմիում գնագոյացման հնարավորությամբ և շուկայական առաջարկի դեֆիցիտով: Չնայած լիարժեք բերքատվության համար պահանջվող միջնաժամկետ ժամանակահատվածին, ձևավորվող բարձր շահութաբերությունը և նվազագույն տարեկան պահպանման ծախսերը ապահովում են տնտեսության երկարաժամկետ կայունությունը և մրցունակությունը:

### Բանջարաբուստանային մշակաբույսեր



### Պատկեր 5. Միամյա ընտրված մշակաբույսերը

Այս խումբը ներառում է **ճակնդեղը, ոլոռը և կորնգանը**, որոնք ապահովում են արագ կանխիկի հոսք և համակարգի գործառնական կայունությունը:

### Այս մշակաբույսերի ընտրությունը պայմանավորված է հետևյալ գործոններով.

- **Արագ շրջանառություն.** ճակնդեղն ու ոլոռը թույլ են տալիս ստանալ եկամուտ արդեն 1-ին տարում՝ ծածկելով ընթացիկ ծախսերը:

- **Բնական պարարտացում.** Ոլոռը և կորնզանը (լոբազգիներ) ֆիքսում են ազոտ հողում՝ սվազեցնելով պարարտանյութերի ծախսը հաջորդող տարիներին:
- **Ներառում անասնապահությունում.** Կորնզանն ապահովում է բարձրորակ կերային բազա՝ ինտեգրելով բուսաբուծությունը Գյուղի ավանդական անասնապահության հետ:

**Աղյուսակ 9. Բանջարաբուստանային մշակաբույսերի տնտեսական ամփոփագիր**

Ցուցիչ	ճակնդեղ	Ոլոռ
Բերքատվություն (տ/հա)	30 - 60	1.5 - 3.0
Գին (դրամ/կգ)	250 - 300	1,500 - 2,000
Եկամուտ (մլն դրամ/հա)	8,25 - 16,5	2,625 - 5,25

Հիմնվելով Աղյուսակ 9-ի տվյալների վրա՝ բանջարաբուստանային մշակաբույսերը համակարգի ֆինանսական կայունացնողներն են, որոնք ապահովում են անհրաժեշտ շրջանառու միջոցներ արդեն առաջին տարում:

- ճակնդեղի բարձր տեսակարար բերքատվությունը (մինչև 60 տ/հա) թույլ է տալիս իրացնել մասշտաբի էֆեկտը՝ գեներացնելով զգալի համախառն հասույթ (մինչև 16,5 մլն դրամ), ինչը հնարավորություն է տալիս սկսել շահույթի ստացումը՝ առանց բազմամյա տնկարկների լիարժեք բերքատվությանը սպասելու:
- Ոլոռի և կորնզանի ներառումը ոչ միայն ապահովում է լրացուցիչ եկամուտ, այլև ծառայում է որպես ներդրում հողի բնական բերրիության մեջ: Ոլոռի միջոցով իրականացվող ազոտֆիքսացիան ուղղակիորեն սվազեցնում են տնտեսության գործառնական ծախսերը. ինչը բարձրացնում է Մեծ Մանթաշի ագրոանտառային մոդելի ընդհանուր արդյունավետությունը:

Աղյուսակ 10-ում ներկայացված են ընտրված մշակաբույսերի գնային տատանումները կախված վաճառքի կետից:

**Աղյուսակ 10. Բանջարաբուստանային մշակաբույսերի մանրածախ գները (1 կգ)**

Վաճառքի կետ	Ճակնդեղ	Ոլոռ (թարմ/կանաչ)
Երևան Սիթի	180 - 320 □	750 - 1,200 □
Պարմա	280 - 450 □	1,400 - 2,100 □
ՍԱՍ	350 - 680 □	1,600 - 2,500 □
Նոր Չովք	160 - 280 □	650 - 950 □

Աղյուսակ 9-ը թույլ է տալիս առանձնացնել տնտեսական զարգացման երեք հիմնական ուղղություններ.

- **Պրեմիում շահութաբերությունն պրեմիում դասի սուպերմարկետներում (ՍԱՍ/Պարմա).** Այս ցանցերն ապահովում են ամենաբարձր գնային շեմը, հատկապես ոլոռի (մինչև 2,500 □/կգ) և ճակնդեղի (մինչև 680 □/կգ) համար: Սա պահանջում է բարձրորակ տեսակավորում և փաթեթավորում, սակայն ապահովում է առավելագույն շահույթ միավոր ապրանքից:
- **Մասշտաբային իրացում (Սիթի/Չովք).** Այս ցանցերի ցածր գնային շեմը (ճակնդեղը՝ 160-180 □/կգ) նախատեսված է արագ շրջանառության և մեծածավալ վաճառքի համար: Սա անհրաժեշտ է օպերատիվ կանխիկի հոսք ապահովելու և մեծաքանակ բերքը արագ սպառելու համար:

**Նիշային և պաշտպանիչ տեսակներ**

Այս կատեգորիան ներառում է հատապտուղները (անփուշ մոշ, մասուր) և անտառային տեսակները (կարգանա, կեչի, գիհի), որոնք ձևավորում են պաշտպանիչ շերտ և ապահովում եկամտի դիվերսիֆիկացում:

Այս տեսակների ընտրությունը պայմանավորված է հետևյալ գործոններով.

- **Արտադրական ենթակառուցվածք.** Կարգանան և կեչին ծառայում են որպես «կենդանի վահան»՝ նվազեցնելով Էրոզիան (30-50%) և պահպանելով խոնավությունը (10-20%):
- **Վերամշակման ներուժ.** Մասուրն ու անփուշ մոշը թիրախավորում են բարձր ավելացված արժեք ունեցող շուկաները (թեյեր, յուղեր, պրեմիում ջեմեր):

**Աղյուսակ 11. Նիշային և պաշտպանիչ տեսակների ֆունկցիոնալ բնութագիրը**

Բուսատեսակ	Տեղաբաշխման գոտի	Կիրառման հիմնական ուղղություն	Փոխարինելիություն և Առավելություն
Անփուշ մոշ	Այգիների սահմանագիծ	Պրեմիում վերամշակում (ջեմեր, օշարակներ, սառեցված, սուբլիմացված, փոշի)	Ճառագույն է որպես անանցանելի բնական պատնեշ
Մասուր	Թեքություններ և եզրաշերտեր	Դեղագործական հումք, բարձրարժեք թեյեր, հյութ, քաղցրահյութ	Կանխում է հողի սահքը և էրոզիան թեք հողերում
Կարգանա	Հողմապաշտպան շերտեր	Ազոտֆիքսացիա, կերային հավելում	Բնական ճանապարհով պարարտացնում է հողը
Կեչի	Հյուսիսային և քամոտ սահմաններ	Միկրոկլիմայի ստեղծում, կեչու հյութ	Ամենաարագաճ տեսակն է քամու դեմ պայքարում
Գիհի	Քարքարոտ և էրոզացվա հատվածներ	Եթերայուղեր, համեմունք, օդի մաքրում	Մշտադալար է՝ ապահովելով պաշտպանություն ողջ տարին

Ի տարբերություն հիմնական մշակաբույսերի, նիշային և պաշտպանիչ տեսակների արժեքը ձևավորվում է ոչ միայն ուղղակի վաճառքից, այլև տնտեսության ընդհանուր արդյունավետության և դիմակայունության բարձրացումից: Ստորև ներկայացված է դրանց ֆունկցիոնալ նշանակությունը և տեղաբաշխման սկզբունքը:

**Կերային մշակաբույս**

Այս խումբը ներառում է կորնզանը, որը համակարգում կատարում է երկակի գործառույթ՝ ապահովելով ինչպես եկամտի ստացման հնարավորություն, այնպես էլ տնտեսության կերային բազայի ձևավորում: Կորնզանը հանդիսանում է բարձրարժեք կերային մշակաբույս, որը լայնորեն կիրառվում է անասնապահության մեջ և նպաստում է կերի ձեռքբերման ծախսերի կրճատմանը:

**Աղյուսակ 12. Կերային մշակաբույսի տնտեսական ամփոփագիր.**

Ցուցիչ	Կորնզան
Բերքատվություն (տ/հա)	15-30
Գին (հակ/հատ) 1 հակը 20 կգ	1,300
Եկամուտ (մլն դրամ/հա)	0,975-1,95

Կորնզանի շուկայական գինը (մոտ 1,300 հակ/հատ) վկայում է, որ այն տնտեսապես արժեքավոր արտադրանք է: Դրա արժեքը պայմանավորված է ինչպես իրացման արդյունքում լրացուցիչ եկամուտների ստացման հնարավորությամբ, այնպես էլ տնտեսության ներսում անասնակերի ծախսերի կրճատմամբ:

### Տնտեսական և կառուցվածքային վերլուծություն

Հիմնվելով Ադյուսակ 11-ի վրա՝ այս տեսակների ներառումը հիմնավորվում է դրանց **ռազմավարական տեղաբաշխմամբ**: Այն տարածքները, որոնք պիտանի չեն ինտենսիվ մշակության համար (քարքարոտ հատվածներ, էրոզացված թեքություններ), յուրացվում են գիհու և մասուրի միջոցով՝ դրանք վերածելով արդյունավետ ակտիվների:

- **Արտադրական ենթակառուցվածքի օպտիմալացում.** Կարգանայի և կեչու շերտերը ծառայում են որպես «կենդանի վահան»՝ փոխարինելով թանկարժեք արհեստական հողմապաշտպան կառույցներին: Դրանք նվազեցնում են էրոզիոն ռիսկերը 30-50%-ով և պահպանում հողի խոնավությունը (10-20%-ով ավելի բարձր), ինչը ուղղակիորեն բարձրացնում է հարակից այգիների բերքատվությունը:
- **Վերամշակման և ավելացված արժեքի ներուժ.** Մասուրն ու անփուշ մոշը թիրախավորում են բարձր ավելացված արժեք ունեցող շուկաները (թեյեր, յուղեր, պրեմիում ջեմեր): Սա հնարավորություն է տալիս տնտեսությանը դիվերսիֆիկացնել եկամուտները և նվազեցնել կախվածությունը մեկ հիմնական մշակաբույսի շուկայական գներից:
- **Երկարաժամկետ ակտիվների կառավարում.** Ի տարբերություն միամյա բույսերի, այս խումբը պահանջում է նվազագույն գործառնական ծախսեր սկզբնական ներդրումից հետո: Ժամանակի ընթացքում դրանց Էկոհամակարգային ծառայությունները և ստացվող հումքի արժեքը շարունակաբար աճում են՝ ապահովելով տնտեսության կայունությունը տասնամյակների համար:

Այսպիսով, նիշային և պաշտպանիչ տեսակները ծառայում են որպես տնտեսության «անվտանգության գոտի»՝ երաշխավորելով եկամտաբերություն և կլիմայական պաշտպանություն այնտեղ, որտեղ ավանդական գյուղատնտեսությունը կլինի ոչ շահութաբեր:

## Ռազմավարական համադրություն և ֆինանսական արդյունք

Մեծ Մանթաշի համար մշակված համակարգը ներկայացնում է ինտենսիվ և շուկայական ուղղվածությամբ պորտֆել, որտեղ յուրաքանչյուր տարր ունի իր հստակ տնտեսական առաքելությունը.

- **Ճնեֆել.** Վերաճում է, որպես Մեծ Մանթաշի գլխավոր մշակաբույս՝ ապահովելով առավելագույն շահութաբերություն և ներմուծման փոխարինում:
- **Միամյա մշակաբույսեր (ճակնդեղ, Ոլոռ).** Երաշխավորում են օպերատիվ կանխիկի հոսք (Quick Cash) արդեն առաջին տարում՝ ծածկելով տնտեսության ընթացիկ ծախսերը:
- **Կերային բույսեր (Կորնգան).** Նպաստում են հողի բնական բերրիության վերականգնմանը և ձևավորում կայուն կերային բազա՝ ինտեգրելով բուսաբուծությունը անասնապահական շղթայի հետ և կրճատելով արտաքին ռեսուրսների ծախսը:
- **Հատապտուղներ և նիշային տեսակներ.** Գեներացնում են լրացուցիչ բարձրարժեք եկամուտ և ձևավորում պաշտպանիչ շերտ կլիմայական ռիսկերի դեմ:

Ստեղծված սիներգիան թույլ է տալիս համայնքին դիրքավորվել որպես բարձրարժեք գյուղատնտեսական հումքի և վերամշակված արտադրանքի կայուն մատակարար՝ նվազագույնի հասցնելով կլիմայական և շուկայական անկանխատեսելի գործոնների ազդեցությունը:

## 5. SWOT Վերլուծություն

Մարքեթինգային հետազոտության ընթացքում իրականացվել է Լեռնավան և Մեծ Մանթաշ համայնքների ագրոանտառային զարգացման ծրագրի SWOT վերլուծություն:

### Աղյուսակ 13. SWOT վերլուծություն

S   Ուժեղ կողմեր	W   Թույլ կողմեր
<p><b>Բարձրադիր գոտու առավելություն</b>                      Ուշացած վեգետացիան ստեղծում է բացառիկ «շուկայական պատուհան» (օգոստոս-սեպտեմբեր), երբ առաջարկը շուկայում նվազագույն է, իսկ գները՝ առավելագույն: Մեծ Մանթաշի բարձր հումուսային սևահողերը և Լեռնավանի բարձր խոնավությունը թույլ են տալիս ստանալ պրեմիում որակի արտադրանք:</p> <p><b>Բազմաշերտ մոդել</b>                      Անտառային և գյուղատնտեսական տեսակների համակցումը ապահովում է հողի պաշտպանվածություն և Էկոհամակարգային կայունություն:</p> <p><b>Ուժեղ մարտական բուսատեսակներ</b>                      Ծնեբեկի և Լավանդայի ընտրությունը թիրախավորում է բարձր մարժայով շուկայական սեզոնները (HoReCa, կոսմետոլոգիա)</p>	<p><b>Ենթակառուցվածքային ճեղք</b>                      Սառնարանային շղթայի և նախնական պաղեցման (Pre-cooling) համակարգերի բացակայություն, ինչը կրիտիկական է հատապտուղների համար:</p> <p><b>Հողակտորների մասնատվածություն</b>                      Փոքր հողակտորները դժվարեցնում են խոշոր խմբաքանակների ձևավորումը և ստանդարտացումը:</p> <p><b>Փորձի և գիտելիքի պակաս</b>                      Բնակիչների անվստահությունը նոր մշակաբույսերի (Ծնեբեկ, Լավանդա) նկատմամբ և ագրոանտառային խնամքի մասնագիտացված հմտությունների բացակայությունը:</p> <p><b>Բրենդի բացակայություն</b>                      Տարածաշրջանային միասնական ապրանքանիշի բացակայությունը նվազեցնում է արտադրանքի ճանաչելիությունը պրեմիում շուկան</p>
<p><b>O   Հնարավորություններ</b></p> <p><b>Արտահանման ուղիներ</b>                      Համագործակցություն խոշոր օպերատորների հետ (օրինակ՝ «Սպայկա», «Թամարա Ֆրուք»)՝ սառեցված հատապտուղների և մասուրի արտահանման համար:</p> <p><b>ESG ֆինանսավորում</b>                      Ծրագրի բնապահպանական բաղադրիչը հնարավորություն է տալիս ներգրավել «կանաչ» վարկեր և դրամաշնորհներ միջազգային կազմակերպություններից:</p> <p><b>Ագրոտուրիզմ</b>                      Լավանդայի և հատապտուղային դաշտերի հիման վրա զբոսաշրջային հոսքերի ձևավորում:</p>	<p><b>T   Սպառնալիքներ</b></p> <p><b>Կլիմայական ռիսկեր</b>                      Կարկուտը, անսպասելի ցրտահարությունները և ուժեղ քամիները (հատկապես Մեծ Մանթաշում) կարող են վնասել բերքը:</p> <p><b>Աշխատուժի արտահոսք</b>                      Երիտասարդության միգրացիան կարող է հանգեցնել աշխատուժի պակասի:</p> <p><b>Գնային տատանումներ</b>                      Միջազգային շուկայում հատապտուղների գների անկայունությունը կարող է ազդել ROI-ի վրա:</p>

#### Աղյուսակ 14. SWOT վերլուծության հիմնման վրա մշակված ռազմավարություն

Ռազմավարություն	Գործողություն
<b>S + O (Աճի ռազմավարություն)</b>	Օգտագործել «ուշ սեզոնի» առավելությունը՝ HoReCa սեկտորում ծնեբեկի և հատապտուղների մենաշնորհային դիրք գրավելու համար:
<b>W + O (Բարելավման ռազմավարություն)</b>	Ներգրավել ESG ներդրումներ՝ համայնքային սառնարանային հանգույցներ ստեղծելու և ենթակառուցվածքային թույլ կողմերը վերացնելու համար:
<b>S + T (Պաշտպանական ռազմավարություն)</b>	Զարգացնել ագրոանտառային շերտերը (Կարգանա, Կեչի)՝ որպես բնական վահան կլիմայական վտանգների և քամիների դեմ:
<b>W + T (Ճգնաժամային ռազմավարություն)</b>	Ստեղծել կոոպերատիվներ՝ մասնատվածությունը հաղթահարելու և ռիսկերը (աշխատուժ, լոգիստիկա) համատեղ կառավարելու համար:

SWOT վերլուծությունը հստակ ցույց է տալիս, որ Լեռնավանի և Մեծ Մանթաշի հիմնական հաջողությունը կախված է ոչ թե արտադրության ծավալներից, այլ ժամանակային և որակական դիրքավորումից: Հիմնական շեշտադրումը պետք է կատարվի «թույլ կողմերի» վերացման վրա (սառնարաններ և կոոպերացիա), ինչը թույլ կտա լիարժեք իրացնել բնակլիմայական հզոր ներուժը: Ճիշտ կառավարման դեպքում այս համայնքները կարող են ապահովել կայուն եկամուտների աճ՝ նվազագույնի հասցնելով բնական և շուկայական ռիսկերը:

## 6. ՇՈՒԿԱՅԻ ՊԱՅՄԱՆՁԱՐԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ՔԱՐՏԵՑ

Այս բաժնում ներկայացված է Լեռնավան և Մեծ Մանթաշ գյուղերի բոլոր մշակաբույսերի (հատապտուղներ, ծնեբեկ, լավանդա, ճակնդեղ, ոլոռ, մասուր) իրացման ամբողջական և ընդլայնված քարտեզը:

Իրացման ուղիները բաժանված են ըստ գործունեության ոլորտների՝ ներառելով կոնկրետ ընկերություններ, դրանց դերը և կոնտակտային տվյալները:

Միաժամանակ, ծրագրի շրջանակում նախատեսվում է ստեղծել և զարգացնել կոոպերատիվի վերամշակման, սառեցման և փաթեթավորման ենթակառուցվածք, որը կդառնա գյուղատնտեսական արտադրանքի առաջնային իրացման հիմնական հանգույցը: Արտադրանքի զգալի մասը նախ կմատակարարվի տվյալ կենտրոնին, որտեղ այն կանցնի տեսակավորման, վերամշակման, սառեցման կամ փաթեթավորման փուլերը՝ ըստ պահանջի: Այնուհետև ավելացված արժեք ստացած արտադրանքը կուղղվի վերջնական շուկաներ՝ ներառյալ մանրածախ առևտրային ցանցերը, առցանց վաճառքի հարթակները, HORECA ոլորտի կազմակերպությունները և հաշվետվության մեջ ներկայացված այլ իրացման ալիքները:

### 6.1 Սուպերմարկետներ և Խոշոր Մթերային Խանութներ (Retail & Groceries)

Թարմ բերքի (հատապտուղներ, անփուշ մոշ, ծնեբեկ) վաճառք անմիջապես սպառողին: Սրանք պրեմիում հարթակներ են, որոնք ապահովում են առավելագույն գին:

#### Աղյուսակ 15. Թիրախային սուպերմարկետների և մթերային ցանցերի իրացման բաշխացուցակ

Ընկերություն	Ուղղվածություն	Հասցե (Գլխամաս)	Կայք	Հեռախոս
Երևան Սիթի	Սուպերմարկետների ցանց	ՀՀ, ք. Երևան, Մեքաստիայի փողոց 143	yerevan-city.am	+374 (55) 254444
ՍԱՍ Գրուպ	Սուպերմարկետների ցանց	ՀՀ, 0002, ք. Երևան, Մաշտոցի պողոտա 18	sas.am	+374 (10) 538888
Նոր Չովք	Սուպերմարկետների ցանց	ՀՀ, 0001, ք. Երևան, Հանրապետության և փողոց 71	norzovq.am	+374 (12) 244444

Ընկերություն	Ուղղվածություն	Հասցե (Գլխամաս)	Կայք	Հեռախոս
Քարֆուր Արմենիա	Միջազգային ցանց	ՀՀ, 0026, ք. Երևան, Արշակունյաց պողոտա 34/3, Ճենգավիթ վարչական շրջան	carrefourarmenia.com	+374 (11) 300700
Պարմա	Պրեմիում սուպերմարկետ	ՀՀ, 0001, ք. Երևան, Հյուսիսային պողոտա 3/85	parma.am	+374 (60) 505050
Էվրիկա	Սուպերմարկետների ցանց	ՀՀ, 0043, ք. Երևան, Շարուրի փողոց 28/2-58	evrikasupermarket.am	+374 (99) 463565
Վ.Ա.Ս Գրուկ	Մթերային ցանց	ՀՀ, 0087, ք. Երևան, Արին-Բերդի փող., 14/15 ՇԷՆք	vas.am	+374 (10) 470363
Բոնուս Սուպերմարկետ	Տարածաշրջանային ցանց	ՀՀ, 0074, ք. Երևան, Վահրամ Արիստակեցյան փող., 1 ՇԷՆք	brandleader.am	+374 (10) 488575

## 6.2 Ռեստորաններ և Հյուրանոցներ (HoReCa)

Շնեբեկի, լավանդայի (խոհարարական) և պրեմիում հատապտուղների օգտագործում բարձրակարգ սենդի և աղանդերների մեջ:

### Աղյուսակ 16. HoReCa ոլորտի թիրախային գործընկերներ և պրեմիում դասի ռեստորաններ

Ռեստորան / Ցանց	Ուղղվածություն	Հասցե	Կայք/ Էլ. փոստ	Հեռախոս
Yeremyan Projects	Հայկական Եվրոպական	ՀՀ, ք. Երևան, Ամիրյան փողոց 1	yeremyanprojects.com	+374 10 600880

Ռեստորան / Ցանց	Ուղղվածություն	Հասցե	Կայք/ Էլ. փոստ	Հեռախոս
Դոլմամա	Հայկական պրեմիում	ՀՀ, ք. Երևան, Պուշկինի փողոց 10	dolmama.am	+374 10 561354
Seasons (Սիզես)	Ֆայն դայնինգ, սրճարան և հրուշակեղենի արտադրություն	ք. Երևան, Մաշտոցի 15/5	seasons.am / info@seasons.am	+374 (11) 500 500
Ալեքսանդր հյուրանոց	Հյուրանոցային ռեստորան	ՀՀ, 0001, ք. Երևան, Աբովյան փողոց 3/4	marriott.com	+374 11-206000
Լավաշ	Ավանդական հայկական	ՀՀ, ք. Երևան, Թումանյան փողոց 21	yeremyanprojects.com	+374 10 608800 / +374 91 608800
Ռենոմե (Renommée)	Հեղինակային խոհանոց	ՀՀ, ք. Երևան, Պավստոս Բուզանդի փողոց 91, 2-րդ հարկ	renommee.am	+374 99 544433
Լիվինգսթոն	Ֆրանսիական / ֆյուն	ՀՀ, ք. Երևան, Ծիծեռնակաբերդի այգի 1, 9-րդ հարկ	livingstonrestaurant.am	+374 10 392020 / +374 99 392020
ArtLunch (Արտ Լանչ)	Քեյթրինգի խոշորագույն ցանց, կորպորատիվ սնունդ	ք. Երևան, տարբեր մասնաճյուղեր (նաև մարզերում)	artlunch.am / info@artlunch.am	+374 (11) 209 000
Մայրիգ	Արևմտահայկական խոհանոց, Նիշային ռեստորան	ք. Երևան, Ամիրյան 4/6	mayrig.com / yerevan@mayrig.com	+374 (10) 544 470

### 6.3 Արտադրողներ և Վերամշակող Ընկերություններ (Manufacturing)

Ծրագրով նախատեսված տեղական կոոպերատիվների վերամշակման, սառեցման և փաթեթավորման կենտրոններ՝ հաղարջի, անփուշ մոշի, ճակնդեղի, ոլոռի և մասուրի առաջնային ընդունման, տեսակավորման, վերամշակման և փաթեթավորման համար: Կոոպերատիվները

հանդես են գալու որպես հիմնական գնորդ և հավաքագրման կենտրոն՝ հետագա իրացման նպատակով արտադրանքը մատակարարելով հյուլթերի, պահածոների, թեյերի, սառեցված մթերքների և դեղագործական արտադրանքի արտադրությամբ զբաղվող կազմակերպություններին:

**Աղյուսակ 17. Արտադրող և վերամշակող ընկերությունների (պոտենցիալ մեծածախ գնորդների) ցանկ**

Ընկերություն	Արտադրանք	Հասցե	Կայք/Էլ. փոստ	Հեռախոս
Եվրոթերմ ՓԲԸ (Նոյան հյուլթեր)	Բնական հյուլթեր, նեկտարներ և մրգային պահպանվող մթերքներ արտադրող	ՀՀ, 0002, ք. Երևան, Ամիրյան փող. 15/2	noyan.am	+374 (10) 538445
ՍԻՍ Նատուրալ ՓԲԸ	Բնական հյուլթեր, բանջարեղենային և մրգային պահածոների արտադրող	Հայաստան, 0081, ք. Երևան, Հաղթանակ թաղամաս, 1-ին փողոց 1/7 ՇԷՆՔ	sisnatural.am	+374 (11) 650650
ԹԱՄԱՐԱ ՏՐՈՒՏ ՓԲԸ	Պահածոացվող մրգեր և բանջարեղեն (կոնսերվներ) արտադրող	Հայաստան, 0214, Արագածոտնի մարզ, գ. Կարբի, 4-րդ փողոց 5 ՇԷՆՔ	tamaragroup.am	+374 (10) 251664
ԱՌԼԵԱՄ (ՍՈՐՏՍՏՈՐ ՍՊԸ)	Արտահանում/վերամշակում	Հայաստան, 0214, Արագածոտնի մարզ, գ. Կարբի, 21-րդ փողոց ՇԷՆՔ	arleam.am	+374 (44) 700400
ՆԱԻՐԻԱՆ ՓԲԸ	Կոմետիկա (Լավանդա)	Հայաստան, 0001, ք. Երևան, Թումանյան փողոց 34 ՇԷՆՔ (Կենտրոն վարչ. շրջան)	nairian.com	+374 (11) 200300
ԱՐՏՖՈՒԴ ՓԲԸ	Պահածոներ (ճակնդեղ)	Հայաստան, 0701, Արարատի մարզ, Արտաշատ, Օգոստոսի 23 փողոց 145 ՇԷՆՔ	artfood.am	+374 (10) 252382

Ընկերություն	Արտադրանք	Հասցե	Կայք/Էլ. փոստ	Հեռախոս
ՖԱՐՄԱՏԵՔ ՓԲԸ	Դեղեր և դեղամիջոցների արտադրող	Հայաստան, 0064, ք. Երևան, Բաճախի փողոց 111 ՇԷՆՔ	pharmatech.am	+374 (91) 292333
Gourmet Dourme (Գուրմե Դուրմե)	Շոկոլադի արտադրություն, չորացված հատապտուղների օգտագործում	ք. Աշտարակ, Գր. Լուսավորչի 5	gourmetdourme.com	+374 (93) 305 061

## 6.4 ՀԿ-ներ և Աջակցող Կառույցներ (NGOs & Cooperatives)

Շուկայական կապերի հաստատում, արտահանման օգնություն և սերտիֆիկացում:

### Աղյուսակ 18. Ագրոբիզնեսի աջակցող կառույցների և մասնագիտացված ՀԿ-ների ցանկ

Կազմակերպություն	Գործառույթ	Հասցե	Կայք	Հեռախոս
Green Lane NGO	Շուկայական կապեր	ՀՀ, ք. Երևան, Հերացի փողոց 24	greenlane.am	+374 (10) 575 779
NABU Armenia	Օրգանական աջակցություն	ՀՀ, ք. Երևան, Իսահակյան 18, «Իսահակյան» բիզնես կենտրոն	nabu.am	+374 (44) 599949
Eco-Globe	Օրգանական սերտիֆիկացում	ՀՀ, ք. Երևան, Արամի փողոց 80, 4-րդ հարկ, 0002	ecoglobe.am	+374 (99) 221295
ICARE Foundation	Ագրոբիզնեսի կրթություն	Գլխամաս՝ ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Պռոշյան, 12-րդ փողոց, 1-ին նրբանցք, 2413; Երևանի օպերացիոն գրասենյակ՝ ՀՀ, ք. Երևան, Տերյան փողոց 74	icare.am	+374 (98) 334565

## 6.5 Գյուղմթերքի Շուկաներ և Մասնագիտացված Խանութներ (Markets & Specialist)

### Աղյուսակ 19. Մասնագիտացված շուկաներ, Էկո-խանութներ և բնական հումքի իրացման կետեր

Անվանում	Տիպը	Հասցե	Նկարագրություն
Գումի շուկա	Մասնագիտացված շուկա	ՀՀ, ք. Երևան, Մովսես Խորենացի փողոց 35 +374 (10) 572003	Թարմ և որակյալ հատապտուղների, մրգերի, բանջարեղենի և այլ սննդամթերքի հայտնի շուկա:
Մալաթիայի գյուղմթերքի շուկա	Մեծածախ շուկա	ՀՀ, ք. Երևան, Ռաֆֆու փողոց, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան	Մեծածախ գյուղմթերքի՝ հատկապես բանջարեղենի և այլ թարմ արտադրանքի հիմնական կետերից մեկը:
Օրգանիկ Արմենիա	Էկո- կազմակերպություն	ՀՀ, 2201, Կոտայքի մարզ, քաղաք Արովյան, Էդ. Պետրոսյան 1/29/10	Օրգանական լավանդայի և հատապտուղների համար:
Էսկուլապ	Դեղաբույսերի կետ	ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի պողոտա 43, 0051	Մասուրի և այլ բնական հումքի գեման կետ:
Կայարանի շուկա	Գյուղմթերքի շուկա	Տիգրան Մեծի պող. 86 (երկաթգծի կայարանի հարևանությամբ) +374 (10) 572500	Թարմ մրգերի, բանջարեղենի և այլ սննդամթերքի հայտնի շուկա:
Թիվ 7 շուկա	Մանրածախ շուկա	Հայաստան, ք. Երևան, Ն. Սաֆարյան փող. 14 +374 (10) 635815 +374 (10) 634833	Վաճառվում են գյուղմթերք, հագուստ և տնտեսական ապրանքներ:

Մեծածախ արագ վաճառք և մասնագիտացված ապրանքների (լավանդայի յուղ, դեղաբույսեր) իրացում:

Բացի ավանդական մեծածախ և մասնագիտացված իրացման ուղիներից, ծրագրի շրջանակում ստեղծվելիք կոոպերատիվները նախատեսվում է համալրել նաև առցանց վաճառքի հարթակներով և սոցիալական ցանցերում գործող վաճառքի էջերով: Այս ալիքները

հնարավորություն կտան թարմ, սառեցված, վերամշակված և փաթեթավորված արտադրանքը անմիջապես առաջարկել վերջնական սպառողներին՝ բարձրացնելով արտադրողների շահութաբերությունը, կրճատելով միջնորդների թիվը և ընդլայնելով շուկայի հասանելիությունը ինչպես Երևանում, այնպես էլ Հայաստանի այլ բնակավայրերում:

Շուկայի վերլուծությունը հաստատում է, որ Լեռնավանի և Մեծ Մանթաշի համար ընտրված մոդելն ունի բարձր տնտեսական կենսունակություն: Իրացման ռազմավարությունը հիմնված է բազմաալիք վաճառքի համակարգի վրա, որը ներառում է կոպերատիվների վերամշակման և փաթեթավորման կենտրոնները, մեծածախ գևորդներին, մանրածախ առևտրային ցանցերը, HORECA ոլորտը, մասնագիտացված շուկաները, ինչպես նաև առցանց խանութներն ու սոցիալական ցանցերի վաճառքի հարթակները: Այս դիվերսիֆիկացված մոտեցումը նվազեցնում է ֆինանսական ռիսկերը, ապահովում է կայուն պահանջարկ և նպաստում գյուղատնտեսական արտադրանքի առավել արդյունավետ իրացմանը:

### **Հիմնական շեշտադրումները.**

- **Թիրախային բաշխում.** Բարձրորակ արտադրանքը (ծնեբեկ, անփուշ մոշ) ուղղվում է պրեմիում սեգմենտին (HoReCa, SAS/City), իսկ մեծ ծավալները՝ վերամշակող հսկաներին (Euroterm, Artfood):
- **Ներմուծման փոխարինում.** Մոդելը լրացնում է ներքին շուկայում առկա դեֆիցիտը՝ ապահովելով բարձր շահութաբերություն, իսկ լրացուցիչ քանակը ամբողջությամբ արտահանվում է:
- **Ավելացված արժեք.** Լավանդայի և դեղաբույսերի միջոցով ձևավորվում է կապ կոսմետիկ և դեղագործական ոլորտների հետ (Nairian, Pharmatech):
- **Չարգացման հեռանկար.** Գործընկերությունը մասնագիտացված ՀԿ-ների հետ (CARD, Green Lane) հիմք է ստեղծում օրգանական սերտիֆիկացման և հետագա արտահանման համար:

Այսպիսով, մշակված իրացման քարտեզը երաշխավորում է, որ արտադրանքն ունի հստակ սպառողական շուկա, ինչն ապահովում է ներդրումների կայուն հետզնում և Գյուղների երկարաժամկետ աճ:

## 7. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լեռնավանի և Մեծ Մանթաշի համար իրականացված հետազոտությունը հաստատում է, որ ագրոանտառաբուծական համակարգի ներդրումը ոչ միայն բնապահպանական անհրաժեշտություն է, այլև տնտեսապես բարձր շահութաբեր բիզնես մոդել: Համայնքների հաջողության հիմնաքարը «Բարձրադիր գոտու առավելություն» է (High-Altitude Advantage): Բնակլիմայական պայմանները թույլ են տալիս շուկա մտնել «ուշացած սեզոնի» պատուհանով, երբ Արարատյան դաշտի առաջարկն արդեն սպառված է, ինչը հնարավորություն է տալիս իրացնել արտադրանքը միջին շուկայականից 25-40% ավելի բարձր գնով:

### **Լեռնավանի և Մեծ Մանթաշի ագրոանտառային զարգացման երկարաժամկետ տնտեսական և շուկայական տեսլականը:**

Լեռնավան և Մեծ Մանթաշ համայնքների համար ագրոանտառային համակարգերի ներդրումը պետք է դիտարկել ոչ միայն որպես գյուղատնտեսական արտադրության բարելավման գործիք, այլ որպես ամբողջական տնտեսական վերափոխման մոդել, որը միաժամանակ լուծում է հողի դեգրադացիայի, կլիմայական խոցելիության, գյուղական աղքատության, աշխատուժի արտահոսքի և շուկայի սահմանափակ հասանելիության խնդիրները:

Լեռնավանը, իր խոնավ միկրոկլիմայով, երկար վեգետացիոն շրջանի և բնական կենսաբազմազանության շնորհիվ, ունի բոլոր նախադրյալները դառնալու Հայաստանի բարձրարժեք **հատապտղային և agro-tourism ուղղվածությամբ ագրոանտառային կենտրոններից մեկը**: Համայնքի համար առավել հեռանկարային են **սև հաղարջը, կարմիր հաղարջը, անփուշ մոշը, ծնեբեկը, լավանդան** և պտղատու ինտեգրված համակարգերը, որոնք միասին ձևավորում են բարձրարժեք, բազմաշերտ և շուկայապես մրցունակ արտադրական մոդել:

Լեռնավանի հիմնական տնտեսական առավելությունը fresh premium market-ի սպասարկումն է: Երևանի HoReCa հատվածը, բարձրակարգ ռեստորանները, բուսիկ հյուրանոցները, առողջ սննդի ցանցերը և niche retail սեզմենտը ձևավորում են այն շուկան, որտեղ փոքր ծավալները կարող են փոխհատուցվել բարձր մարժայով: Հատկապես կարևոր է այն հանգամանքը, որ Լեռնավանը կարող է առաջարկել «late-season» արտադրանք, երբ ցածրադիր գոտիներում հատապտղային սեզոնն արդեն ավարտված է: Սա ստեղծում է գնային հավելավճարի հնարավորություն և նվազեցնում է ուղիղ մրցակցությունը շուկայի հիմնական մատակարարների հետ:

Լեռնավանի համար ռազմավարական ուղղությունն պետք է դառնա նաև ագրոտուրիզմի ինտեգրումը: Լավանդայի, հատապտղային այգիների և բազմաշերտ անտառային համակարգերի համադրությունը հնարավորություն է տալիս համայնքը դիրքավորել ոչ միայն որպես արտադրական, այլ նաև փորձառական տարածք՝ farm-to-table և eco-experience տրամաբանությամբ: Սա մեծացնում է ոչ միայն գյուղատնտեսական, այլ նաև ծառայությունների ոլորտի եկամուտները:

Միևնույն ժամանակ, Մեծ Մանթաշի տնտեսական տրամաբանությունը էապես տարբեր է: Համայնքը չի կարող մրցակցել ինտենսիվ այգեգործության կամ բարձր խոնավություն պահանջող մշակաբույսերի ուղղությամբ, սակայն ունի բացառիկ առավելություններ

կլիմայակայուն, բարձրադիր, ֆունկցիոնալ և վերամշակման համար նպատակային գյուղատնտեսության զարգացման համար:

Մեծ Մանթաշի հիմնական ռազմավարական մշակաբույսերը՝ կորնզանը, ծնեբեկը, ճակնդեղը, ոլոռը և մասուրը, ընտրված են ոչ միայն ագրոնոմիական համապատասխանության, այլ առաջին հերթին շուկայական տրամաբանության հիման վրա: Այս մշակաբույսերը թույլ են տալիս համատեղել արագ cash-flow-ը, ցածր արտադրական ռիսկը, վերամշակման հնարավորությունները և արտահանման պոտենցիալը:

Հատկապես կարևոր է կորնզանի ռազմավարական դերը: Այն համայնքի համար հանդիսանում է ոչ միայն անասնակերի աղբյուր, այլ հողի վերականգնման և ածխածնային կայունության գործիք: Կորնզանի միջոցով հնարավոր է նվազեցնել ագոտական պարարտանյութերից կախվածությունը, վերականգնել հողի կառուցվածքը և ստեղծել կայուն կերային բազա տարածաշրջանային անասնապահության համար: Այս տրամաբանությամբ Մեծ Մանթաշը կարող է դիրքավորվել որպես բարձրորակ բնական կերերի և climate-resilient forage systems-ի տարածաշրջանային կենտրոն:

Ծնեբեկը երկու համայնքների համար հանդիսանում է բարձրարժեք ռազմավարական մշակաբույս, որն ապահովում է երկարաժամկետ եկամուտ, բարձր պահանջարկ և արտահանման ներուժ ինչպես թարմ, այնպես էլ վերամշակված արտադրանքի շուկաներում: Ագրոտանտառային մոդելի ներդրումը Լեռնավանում և Մեծ Մանթաշում կհանգեցնի համայնքային տնտեսության կառուցվածքային փոփոխության: Այս մոտեցումները հնարավորություն կտան նվազեցնել շուկայի ռիսկերը, ընդլայնել վաճառքի ալիքները և բարձրացնել համայնքների տնտեսական կայունությունը՝ անկախ նրանից, թե արդյոք ապագայում կձևավորվեն պաշտոնական կոոպերատիվներ կամ այլ բիզնես կառույցներ:

## **Կանանց տնտեսական ներգրավման և ձեռնարկատիրության խթանում**

Տնտեսական զարգացման կարևոր ուղղություններից մեկը պետք է լինի կանանց ակտիվ ներգրավումը արժեքային շղթայի տարբեր օղակներում: Կանայք կարող են ներգրավվել բարձր ավելացված արժեք ստեղծող գործունեություններում, որոնք կնպաստեն արտադրանքի դիվերսիֆիկացմանը, արժեքի ավելացմանը և նոր շուկայական հնարավորությունների ձևավորմանը:

Առաջնահերթ ուղղություններ կարող են լինել՝

- լավանդայի և դեղաբույսերի չորացում և փաթեթավորում,
- բուսական թեյերի արտադրություն,
- հատապտուղների վերամշակում,
- նվերային և հուշանվերային հավաքածուների պատրաստում,
- սոցիալական մեդիայի և առցանց վաճառքի կառավարում,
- ագրոտուրիստական ծառայությունների կազմակերպում,
- հյուրասիրության և գյուղական փորձառությունների իրականացում:

Այս ուղղությունները հնարավորություն կտան ընդլայնել գյուղական զբաղվածությունը, ձևավորել լրացուցիչ եկամտի աղբյուրներ և բարձրացնել կանանց տնտեսական ինքնուրույնությունը:

### **Կանանց մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներում**

Ագրոանտառային համակարգերի երկարաժամկետ հաջողությունը կախված է համայնքային կառավարման և որոշումների կայացման գործընթացների ներառականությունից: Այդ նպատակով կարևոր է ապահովել կանանց ներկայացվածությունը համայնքային զարգացման, կոոպերատիվների կառավարման և տեղական տնտեսական նախաձեռնությունների պլանավորման գործընթացներում:

Նպատակահարմար է՝

- սահմանել կանանց ներկայացվածության սվազագույն շեմեր համայնքային և կոոպերատիվ կառավարման մարմիններում,
- իրականացնել առաջնորդության և կառավարման հմտությունների զարգացման ծրագրեր,
- ապահովել կանանց ներգրավվածությունը ռազմավարական պլանավորման և ռեսուրսների բաշխման գործընթացներում,
- ձևավորել կանանց մասնակցության մշտադիտարկման և գնահատման մեխանիզմներ,
- խրախուսել կանանց առաջադրումը ղեկավար և համակարգող դերերում:

Այս մոտեցումը կնպաստի ավելի հավասարակշռված, մասնակցային և կայուն համայնքային կառավարման համակարգի ձևավորմանը:

### **Թվային վաճառքի և համայնքային մարքեթինգի զարգացում**

Արտադրանքի իրացման արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է զարգացնել թվային վաճառքի և համայնքային մարքեթինգի գործիքները:

Առաջարկվում է կիրառել՝

- Facebook և Instagram վաճառքի էջեր,
- առցանց պատվերների ընդունման համակարգ,
- QR կոդերով արտադրանքի հետազօծելիություն,
- ֆերմերների և համայնքների պատմությունների ներկայացում (Storytelling Marketing),
- համայնքային թվային դեսպանների (Digital Ambassadors) ցանց:

Այս մոտեցումները հնարավորություն կտան ընդլայնել շուկայի հասանելիությունը, ներգրավել երիտասարդներին և բարձրացնել արտադրանքի ճանաչելիությունը:

## Աղյուսակ 20. Արտադրական ցիկլի և ռազմավարական դիրքավորման աղյուսակ

Մշակաբույս	Առաջին բերք	Արտադրական կյանք	Շուկայական դիրքավորում
Ճնեբեկ (Asparagus)	2-րդ տարի (թեթև բերք)	15–20 տարի (Պիկը՝ 4-րդ տարուց)	Ուշ սեզոնի պրեմիում որակ. ներմուծման փոխարինում և բարձր գին մայիսի վերջին:
Լավանդա (Lavender)	2-րդ տարի	10–12 տարի (Պիկը՝ 3-4-րդ տարում)	Բազմաֆունկցիոնալ եկամտի աղբյուր. եթերայուղ, չորացված հումք, բուսական թեյեր, կոսմետիկ արտադրանք և ագրոտուրիստական ծառայություններ
Սևփուշ մոշ և Յաղարջ	2-րդ տարի	12–15 տարի (Պիկը՝ 3-4-րդ տարում)	Բարձրադիր գոտու զով գիշերների շտրիկ՝ բարձր շաքարայնություն և վիտամիններ. պրեմիում հումք IQF սառեցման համար:
Կորնզան (Sainfoin)	1-ին տարի (հիմնավորում)	2-րդ տարի (առավելագույն զանգված)	«Կենդանի պարարտանյութ»․ հողի հարստացում ազոտով՝ նախապատրաստելով այն հաջորդ բարձրարժեք տնկարկների համար:
Ոլոռ և ճակնդեղ	3–4 ամիս	Միամյա ցիկլ	Ակնթարթային կանխիկ հոսք (Quick Cash) առաջին իսկ սեզոնին: Ուշ սեզոնի ճակնդեղի թանկացում ձմռանը:

Երկու համայնքներում հիմնական սահմանափակող գործոնները շարունակում են մնալ՝

- սառնարանային շղթայի բացակայությունը,
- սերմերի որակի խնդիրները,
- շուկայի մասնատված կառուցվածքը,

- թույլ բանակցային դիրքը,
- post-harvest կառավարման բացերը,
- և միջնորդներից կախվածությունը:

Կոոպերատիվ մոդելը հանդիսանում է նախընտրելի, սակայն ոչ միակ հնարավոր իրացման մեխանիզմը: Համայնքներում կարող են կիրառվել նաև անհատական, խմբային և ուղղակի վաճառքի մոդելներ, որոնք թույլ կտան շուկա մուտք գործել նաև կոոպերատիվների բացակայության պայմաններում: Փոքր ֆերմերները առանձին չեն կարող ապահովել այն ծավալները և որակը՝ ներառյալ տեսակավորումը, մակնշումը, փաթեթավորումը, որ պահանջում են HoReCa ցանցերը, սուպերմարկետները կամ վերամշակողները: Կոլեկտիվ մատակարարումը, միասնական բրենդավորումը, ուղղակի վաճառքի մեխանիզմները և թվային առևտրի գործիքները համատեղ կարող են ձևավորել կայուն և բազմաալիք շուկայական ներկայություն

## 7.1 Շուկայավարման ռազմավարություն

Չնայած կոոպերատիվ մոդելը դիտարկվում է որպես արտադրանքի հավաքագրման, տեսակավորման, փաթեթավորման և իրացման առավել արդյունավետ մեխանիզմ, անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն սցենարը, երբ համայնքներում ձևավորված ակտիվ խմբերը չեն վերածվում պաշտոնական կոոպերատիվների կամ ագրոբիզնես կառույցների: Այդ դեպքում արտադրողների համար կարևոր է ապահովել շուկա մուտք գործելու այլընտրանքային ուղիներ՝ առանց միջնորդավորված կառույցների գոյությունից կախված լինելու:

Այս նպատակով առաջարկվում է զարգացնել բազմաալիք շուկայավարման մոդել, որը ներառում է.

- ֆերմերական շուկաների և գյուղատնտեսական տոնավաճառների մասնակցություն Երևանում, Գյումրիում և մարզկենտրոններում,
- անմիջական վաճառք սպառողին (Direct-to-Consumer, D2C),
- նախնական պատվերների (Pre-Order) համակարգերի կիրառում սոցիալական ցանցերի միջոցով,
- համայնքային հավաքման կետերից խմբային առաքումների կազմակերպում,
- տեղական զբոսաշրջային ուղղությունների և հյուրատների հետ համագործակցություն,
- առցանց վաճառքի հարթակների և սոցիալական ցանցերում գործող մասնագիտացված էջերի օգտագործում:

Միևնույն ժամանակ, եթե ծրագրի շրջանակներում ստեղծվեն վերամշակման, սառեցման կամ փաթեթավորման ենթակառուցվածքներ, դրանք կարող են ծառայել որպես արտադրանքի հիմնական հավաքագրման և արժեքի ավելացման հանգույցներ: Այս դեպքում արտադրանքը կարող է իրացվել ոչ միայն թարմ տեսքով, այլ նաև սառեցված, չորացված, փաթեթավորված կամ վերամշակված ձևաչափերով՝ հետագա մատակարարմամբ սուպերմարկետներին, HoReCa ոլորտին, մասնագիտացված մանրածախ ցանցերին և առցանց վաճառքի ալիքներին:

Համայնքների տնտեսական կայունությունը և արտադրանքի ավելացված արժեքը բարձրացնելու նպատակով առաջարկվում է ավանդական իրացման ուղիներին զուգահեռ ներդնել նորարարական շուկայավարման գործիքներ:

Առաջարկվող ռազմավարական ուղղությունները ներառում են՝

- **Արտադրողից անմիջապես սպառողին վաճառք (D2C) և Համայնքի աջակցությամբ գյուղատնտեսություն** ( Community Supported Agriculture CSA) բաժանորդագրության մոդելներ, որոնց շրջանակում Երևանի և այլ քաղաքների վճարունակ սպառողները կարող են նախապես բաժանորդագրվել «Լեռնային Էկո-Չամբյուղ» ձևաչափով սեզոնային արտադրանքի մատակարարմանը:
- Կորպորատիվ ESG և Սոցիալական ազդեցություն համագործակցություններ, որոնց շրջանակում կանանց խմբերի կողմից արտադրված թեյերը, չորացված դեղաբույսերը, լավանդայի արտադրանքը և նվերային հավաքածուները կարող են դիրքավորվել որպես սոցիալական ազդեցություն ստեղծող կորպորատիվ նվերներ բանկերի, ՏՏ ընկերությունների և խոշոր գործատուների համար:
- **Դարձեք հատապտղի շարքի հովանավոր** ( “Adopt a Lavender Row»” և “Adopt a Berry Row” մոդելներ, որոնց միջոցով անհատները կամ ընկերությունները կարող են ֆինանսավորել տնկարկների առանձին հատվածների խնամքը՝ ստանալով ճանաչում, այցելության հնարավորություն և բերքի մի մասի օգտագործման իրավունք:
- HoReCa ոլորտի հետ համատեղ բրենդավորված (Co-Marketing) համագործակցություններ, որոնց շրջանակում ռեստորանները և հյուրանոցները կարող են օգտագործել համայնքների արտադրանքը սեզոնային մենյուներում՝ ընդգծելով արտադրանքի ծագումը և բարձրադիր գոտու առավելությունները:
- Փորձառական ագրոտուրիզմի զարգացում՝ «Harvest Experience», «Pick-Your-Own» և թեմատիկ բերքահավաքի միջոցառումների միջոցով, որտեղ այցելուները կարող են մասնակցել արտադրական գործընթացներին և անմիջապես տեղում ձեռք բերել արտադրանքը:
- Թվային պատմությունների և QR կոդերի կիրառություն, որոնց միջոցով սպառողները կարող են ծանոթանալ արտադրանքի ծագմանը, համայնքներին և այն պատրաստող կանանց պատմություններին՝ բարձրացնելով արտադրանքի վստահելիությունն ու սոցիալական արժեքը:
- «Insta-Tourism» և թվային ներգրավման գործիքներ՝ ֆոտոգոտիների, թեմատիկ միջոցառումների, բլոգերների այցերի և սոցիալական ցանցերում համայնքների տեսանելիության բարձրացման միջոցով:
- «Climate-Smart», «High-Altitude Produced» և համայնքային ծագման բրենդավորման մոտեցումներ, որոնք կօգնեն արտադրանքը տարբերակել մրցակիցներից և ստեղծել հավելյալ արժեք ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում:

Այս մոտեցումները հնարավորություն կտան ձևավորել բազմաալիք վաճառքի համակարգ, ընդլայնել շուկայի հասանելիությունը, բարձրացնել արտադրանքի ճանաչելիությունը և ապահովել համայնքների տնտեսական կայունությունը՝ անկախ կոոպերատիվների կամ այլ բիզնես կառույցների ձևավորման մակարդակից:

## 7.2 Համայնքային բրենդավորման ռազմավարություն

Լեռնավանի և Մեծ Մանթաշի արտադրանքի ռազմավարական դիրքավորումը նպատակահարմար է իրականացնել ոչ թե որպես առանձին ապրանքատեսակների համախումբ, այլ որպես **միասնական տարածքային բրենդ`** հիմնված բարձրադիր գոտու ազրոէկոլոգիական մրցակցային առավելությունների վրա:

### Բրենդավորման հիմնական որոշիչ գործոններն են`

- բարձրադիր տեղադիրքի պայմանավորված որակական առավելությունները
- կլիմայական կայունություն և արտադրության կանխատեսելիություն
- Էկոլոգիապես մաքուր և ցածր ինտենսիվության արտադրական համակարգ
- համայնքային կոոպերացիայի վրա հիմնված արժեքային շղթա

Միասնական բրենդը նպաստում է շուկայի ճանաչելիության բարձրացմանը, հավելյալ արժեքի ստեղծմանը և արտահանման շուկաներում մրցունակ դիրքավորմանը:

### Արտադրական և արտահանման կառուցվածք

Գյուղերը ձևավորում են **փոխլրացնող արտադրական մասնագիտացում**, որը հնարավորություն է տալիս կառուցել դիվերսիֆիկացված արտահանման համակարգ միաժամանակ սպասարկելով տարբեր շուկայական սեգմենտներ:

### ESG և կլիմայական կայունության բրենդավորում

Միջազգային շուկաների զարգացման միտումները ցույց են տալիս աճող պահանջարկ ոչ միայն օրգանական, այլ նաև **ESG-համապատասխան և climate-smart արտադրական համակարգերի** նկատմամբ:

Այս համատեքստում FORACCA նախաձեռնությունը հնարավորություն ունի ձևավորելու ինտեգրված բրենդավորման շրջանակ, որը ընդգծում է`

- կլիմայական փոփոխություններին դիմակայուն արտադրություն
- շրջակա միջավայրի վրա ցածր ազդեցություն
- կայուն հողօգտագործման պրակտիկաներ
- սոցիալական արժեքի ստեղծում համայնքային մակարդակում

Այս մոտեցումը ուժեղացնում է արտադրանքի արտահանման մրցունակությունը և ներդրումային գրավչությունը:

### Տնտեսական և տարածքային ազդեցություն

Ագրոանտառային մոդելը դիտարկվում է որպես **բազմաշերտ տարածքային տնտեսական վերակենդանացման համակարգ**, որը համադրում է հետևյալ բաղադրիչները`

- հողի բերրիության վերականգնում և էկոհամակարգային կայունացում
- կենսաբազմազանության աճ

- բարձրարժեք շուկաների ինտեգրում
- վերամշակման արժեքային շղթաների զարգացում
- ագրոտուրիզմի զարգացման հնարավորություն
- համայնքային համագործակցության ինստիտուցիոնալացում

Լրացուցիչ սոցիալ-տնտեսական բաղադրիչ է հանդիսանում **սոցիալական ազդեցության բրենդավորումը**, որը ներառում է կանանց տնտեսական մասնակցության խթանումը արտադրության և վերամշակման շղթաներում: Սա ապահովում է արտադրանքի հավելյալ արժեք՝ հատկապես premium մեծածախ, corporate gifting և tourism-linked շուկաներում:

### **Եռամակարդակ տնտեսական մոդել և ակտիվների կառավարում**

Համայնքների տնտեսական կայունությունը երաշխավորվում է ակտիվների դիվերսիֆիկացված պորտֆելով:

- 1. Ռազմավարական հիմք (Կորնգան).** Գործում է որպես ներքին ռեսուրսների վերականգնման մեխանիզմ: Այն ապահովում է հողի ազոտական հարստացում և կայուն կերային բազա, ինչը նվազեցնում է անասնապահական մթերքի ինքնարժեքը:
- 2. Բարձրարժեք ակտիվներ (Ճնեբեկ, Լավանդա).** Թիրախավորում են բարձր վճարունակ սեզմենտները (Premium HoReCa): Ապահովում են առավելագույն շահութաբերություն 1 հա-ի հաշվով՝ ձևավորելով համայնքի հիմնական շահույթը:
- 3. Արդյունաբերական մասշտաբ (Հատապտուղներ, Մասուր).** Ապահովում են իրացման մեծ ծավալներ և համագործակցություն խոշոր վերամշակող հզորությունների հետ (Industrial Scaling):

Ագրոանտառային մոդելը հավասարակշռում է կարճաժամկետ եկամուտը և երկարաժամկետ ակտիվների ստեղծումը:

- **Արագ կանխիկ հոսք (Quick Cash):** Ոլոռի և ճակնդեղի նման միամյա մշակաբույսերը հնարավորություն են տալիս ստանալ եկամուտ արդեն 3-4 ամսվա ընթացքում, ինչը ծածկում է ընթացիկ գործառնական ծախսերը:
- **Միջնաժամկետ կայունություն:** Հատապտուղային տնկարկները, ծնեբեկը և լավանդան մտնում են լիարժեք բերքատվության փուլ 3-րդ տարում, ապահովելով կայուն շահութաբերություն հաջորդ 10-15 տարիների համար:
- **Երկարաժամկետ կապիտալիզացիա:** Ծնեբեկը, տնկվելուց հետո, դառնում է «բերքատու ակտիվ» մինչև 20 տարի ժամկետով, իսկ անտառային տեսակները (կաղնի, հացենի) ձևավորում են համայնքի էկոլոգիական և փայտանյութային \$ոնդը:

### **«70/20/10» Կանոնը**

Համայնքներին առաջարկվում է հողօգտագործման «70/20/10» կանոնը:

- 70%՝ Կայուն արտադրական տեսակներ (Կորնգան, Հատապտուղ)՝ հիմնական եկամտի համար:

- 20%` Բարձրարժեք նորարարություններ (Ճնեբեկ, Լավանդա)` գերշահույթի համար:
- 10%` Անտառային պաշտպանիչ շերտեր` Էկոլոգիական անվտանգության համար

Լեռնական և Մեծ Մանթաշ համայնքների անցումը ագրոանտառային մոդելին հանդիսանում է տեխնիկապես հիմնավորված և տնտեսապես շահավետ ռազմավարություն:

Այն թույլ է տալիս ձևավորել **բարձր տեխնոլոգիական ագրոբիզնես**, որը հիմնված է կլիմայական կայունության և շուկայական նպատակային դիրքավորման վրա:

Սույն շուկայի հետազոտությունը մշակվել է «Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման  
Կենտրոնի մասնագետների կողմից



ՀՀ, 0002, Երևան, Եկմայան փողոց 6



+374 10 574778 | +374 77 574778 | +374 95 574778 | +374 99 574778



[www.bsc.am](http://www.bsc.am)



[bsc@bsc.am](mailto:bsc@bsc.am)



<https://www.facebook.com/BSCBusinessSupportCenter>



<https://www.linkedin.com/company/bsc-business-support-center/>